

Հավելված N1
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 23-ի N 486-Ն որոշման

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿ**

Բովանդակություն

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ..... 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ..... 7

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ..... 10

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....13

ԾՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ14

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....33

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 34

ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 36

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 38

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 42

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 42

ՀՕՏԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ 43

ՍՏԱՆԴԱՐՏ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 46

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՐՍՏԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... 47

Գլուխ 1

Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի հասկացություններ և սահմանումներ

Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն՝ մեկ տանիքի տակ բնակվող բոլոր անդամները՝ որպես մեկ տնտեսական ու կենցաղային միավոր: Այն կարող է բաղկացած լինել մեկ հիմնական ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքախմբից: Այն փոխհատուցում կամ վերականգնում ստացող նշանակալի միավոր է:

Ազդեցության ենթարկված անձ կամ անձինք՝ ցանկացած անձ (անհատ), որ ենթարկվել է Ծրագրի ազդեցությանը հողի, ջրի, բնական ռեսուրսների օգտագործման փոփոխությունների կամ եկամուտների կորուստների տեսքով:

Իրավատեր ազդեցության ենթարկված անձինք՝ ազդեցության ենթարկված անձինք, որոնց իրավունքներն ազդակիր գույքի նկատմամբ գրանցված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Փոխհատուցում՝ ձեռք բերված ակտիվների փոխարինման արժեքի հատուցում դրամական կամ բնեղեն արտահայտությամբ:

Կասեցման օր՝ մարդահամարի, ազդակիր ակտիվների գույքագրման և սոցիալ-տնտեսական ուսումնասիրության արդյունքների ամփոփման ամսաթիվ՝ տվյալ հատվածի համար ազդեցության ենթարկված գույքի կամ ակտիվների նկարագրության արձանագրության կազմման միջոցով (Ազդեցության ենթարկված անձանց և Ձեռքբերողի կողմից արձանագրության ստորագրման առաջին օրը): Կասեցման օրվանից հետո կատարված բարելավումները փոխհատուցման ենթակա չեն:

Իրավունքներ՝ տնտեսական և սոցիալական հիմքը վերականգնելու նպատակով ազդեցության ենթարկված անձանց ուղղված միջոցառումների շրջանակ՝ փոխհատուցում, եկամտի վերականգնում, տեղափոխման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում՝ կախված նրանց կորուստների բնույթից:

«Տեղաբնիկներ»՝ Ասիական զարգացման բանկի՝ Տեղաբնիկների քաղաքականության մեջ կիրառվող «Տեղաբնիկներ» եզրույթ, որն ընդհանրական հասկացություն է և հեշտ չէ մեկ հասկացությամբ արտահայտել: Էթնիկ փոքրամասնությունը տեղաբնիկների հայեցակարգին առնչվող այլ եզրերից մեկն է, ինչպես նշվում է Ասիական զարգացման բանկի քաղաքականության մեջ: Այլ հասկացություններ են՝ «մշակութային փոքրամասնություններ», «տեղաբնիկ մշակութային համայնքներ», «ցեղատեսակներ», «գրանցված ցեղեր», «տեղացիներ» և «աբորիգեններ»: Ընդունված կամ նախընտրելի հասկացությունները և սահմանումները տարբեր երկրներում տարբեր են: «Տեղաբնիկ» եզրը կիրառվում է Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթերում, և Ասիական զարգացման բանկն այն օգտագործում է միայն հարմարության նկատառումով: Հայաստանում էթնիկ փոքրամասնություն եզրն առավել կիրառելի է համարվում: Այս տեսանկյունից Ասիական զարգացման բանկի Տեղաբնիկների քաղաքականության համատեքստում դիտարկվելու համար էթնիկ փոքրամասնության ներքո հասկացվում են «գերիշխող կամ մեծամասնություն կազմող հասարակությունից տարբեր սոցիալական կամ մշակութային

ինքնություն ունեցողները, ինչը նրանց խոցելի է դարձնում զարգացման գործընթացներում անբարենպաստ վիճակում հայտնվելու տեսակետից»:

Բարելավումներ՝ անձի, տնային տնտեսության, հաստատության կամ կազմակերպության կողմից կառուցված շինություններ (բնակելի միավոր, ցանկապատ, սպասասրահի ծածկեր, գոմ, կոմունալ հարմարություններ, համայնքային կառույցներ, խանութներ, պահեստներ և այլն) և ցանված մշակաբույսեր կամ բույսեր:

Հողի օտարում՝ գործընթաց, որի միջոցով անձը պետական մարմնի կողմից հարկադրված է հանրային նպատակի համար փոխհատուցման դիմաց պետական մարմնի սեփականությանն ու տիրապետմանն օտարել իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տիրապետվող ամբողջ հողատարածքը կամ դրա մի մասը:

Օրինականացման իրավունակ ազդեցության ենթարկված անձինք՝ ազդեցության ենթարկված անձինք, ովքեր ազդեցության ենթարկված հողի կամ հարակից շենքի կամ ակտիվի նկատմամբ չունեն գրանցված սեփականության կամ այլ գույքային իրավունքներ, սակայն օրենքի ուժով իրավունակ են ստանալ նման իրավունք՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Օրինականացման ոչ իրավունակ ազդեցության ենթարկված անձինք՝ ազդեցության ենթարկված անձինք, ովքեր փաստացի զբաղեցնում և օգտագործում են ազդեցության ենթարկված ակտիվը նկարագրության արձանագրության կազմման ամսաթվի դրությամբ, սակայն իրավական հնարավորություն չունեն կամ իրավունակ չեն սեփականության կամ այլ գույքային իրավունք ստանալ ազդեցության ենթարկված ակտիվի նկատմամբ:

Վերականգնում՝ հարկադիր վերաբնակեցման մասին Քաղաքականության Շրջանակի ներքո նախատեսված փոխհատուցման միջոցներ (ներառյալ՝ վերաբնակեցման օժանդակությունը), բացի ձեռքբերված ակտիվների փոխարինման արժեքի վճարումից:

Վերաբնակեցում՝ ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների ֆիզիկական տեղափոխում վերջինիս՝ Ծրագրին նախորդող բնակության կամ ձեռնարկատիրության վայրից:

Փոխարինման արժեք՝ արժեք, որ որոշվել է որպես արդար փոխհատուցում արտադրողական ներուժի կամ ընթացիկ շուկայական արժեքի վրա հիմնված հողի, տների և շինությունների փոխարինման ծախսի (շինանյութերի և աշխատուժի ընթացիկ շուկայական գին՝ առանց մաշվածության կամ խնայված շինանյութի նվազեցումների) և բնակելի հողերի, մշակաբույսերի, ծառերի և այլ ապրանքների շուկայական արժեքի համար:

Տարաբնակեցում՝ ազդեցության ենթարկված անձանց գույքի կամ ապրուստի միջոցների վրա Ծրագրի ցանկացած և բոլոր անբարենպաստ ազդեցությունները մեղմելու համար ձեռնարկված բոլոր միջոցները, ներառյալ՝ փոխհատուցումը, տեղափոխումը (անհրաժեշտության դեպքում) և վնասված կամ հեռացված ենթակառուցվածքի և կայանքների վերականգնումը:

Հողօգտագործման սահմանափակումներ՝ Ծրագրի արդյունքում առաջացած՝ գյուղատնտեսական, բնակելի, առևտրային կամ այլ հողերի օգտագործման

սահմանափակումներ կամ արգելքներ: Դրանք կարող են ներառել օրենսդրորեն սահմանված զբոսայգիներ և պահպանվող տարածքներ մուտքի սահմանափակումները, ընդհանուր սեփականության այլ ռեսուրսների հասանելիության սահմանափակումները և հողօգտագործման, ներառյալ՝ կոմունալ սերվիտուտներում կամ անվտանգության գոտիներում գտնվող հողերի սահմանափակումները:

Խիստ ազդակիր տնային տնտեսություն՝ ներառում է ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, ովքեր.

1) կորցնում են իրենց արտադրողական հողի կամ եկամտի աղբյուր հանդիսացող ակտիվների 10%-ը կամ ավելին, կամ

2) ֆիզիկապես տեղահանվում են, կամ

3) կորցնում են առևտրային կամ ձեռնարկատիրական հիմնարկներ:

Խոցելի տնային տնտեսություններ՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից ցածր եկամուտով ապրող Ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ կամ կանանց կամ տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ:

Գլուխ 2

Ընդհանուր դրույթներ

1. Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը նախատեսված է Ծրագրի համար, որն իրականացվում է Ասիական զարգացման բանկի վարկային ֆինանսավորմամբ: Ծրագրի իրականացման ժամանակահատվածը 4 տարի է, որի ավարտն ըստ գործող վարկային համաձայնագրի 2028 թվականի մարտի 30-նն է:

2. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ, ով գործում է որպես Ծրագրի գործադիր գործակալություն (executing agency): Երևանի քաղաքապետարանը Ծրագրի իրականացնող գործակալությունն է (implementing agency) ի դեմս «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի:

3. Ծրագիրն ընդգրկում է Երևանի Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանները՝ Երևան քաղաքի կենտրոնից մոտ 3 կմ հարավ-արևմուտք: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածը, որը զգալիորեն կնվազեցնի Իսակովի պողոտայից Արշակունյաց պողոտա երթևեկության ժամանակը և կթեթևացնի ծանրաբեռնվածությունը քաղաքի կենտրոնում: Նոր ծրագիծը կկապի Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային և կլինի Մոնթե Մելքոնյան փողոցի շարունակությունը:

4. Ծրագիրը ներառում է մոտ 6,6 կմ երկարությամբ քաղաքային երկկողմանի ճանապարհի կառուցում՝ կենտրոնական բաժանարարով և մայթերով (մոտ 1860 մ հիմնական ճանապարհ): Հրազդան գետի վրայով կկառուցվի 28 մ երկարությամբ հեծաններով երկաթբետոնե կամուրջ:

5. Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվել են դեռևս Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակում՝ Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատուի կողմից և վերջնական են:

6. Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը նկարագրում է Ծրագրի շրջանակներում հողի օտարման և տարաբնակեցման առաջադրանքների պլանավորման և իրականացման մեխանիզմները, ընթացակարգերը և փոխհատուցման իրավունքները և հիմք կհանդիսանա դրանց պատրաստման ու իրականացման համար: Այն համապատասխանում է Ասիական զարգացման բանկի Անվտանգության երաշխիքների 2009 թվականի հայտագրին և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի կանոնակարգերին: Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը կիրառարակվի Երևանի քաղաքապետարանի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Ասիական զարգացման բանկի կայքերում:

7. Ծրագրի շրջանակներում հարկադիր վերաբնակեցման ազդեցությունների ստուգման արդյունքում բացահայտվել է 3 հատված առանց որևէ Հողի օտարման և տարաբնակեցման ազդեցության: Դրանք ներառված են Սոցիալական համալիր ստուգման (due diligence) հաշվետվության նախագծում, իսկ հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություն կրող հատվածները ներառված են Ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրում:

8. Ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների պայմանագրում կիրառվելու է հատվածային մոտեցում՝ շինարարական աշխատանքների մեկնարկը խթանելու համար: Առանց հողի օտարման և տարաբնակեցման ազդեցության հատվածները, որոնք ներառված են Սոցիալական համալիր ստուգման հաշվետվությունում, կհանձնվեն Կապալառուին պայմանագրի կնքումից հետո: Պայմանագրի շնորհումն ինքնին պայմանավորված է Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնականացմամբ: Հողի օտարման և տարաբնակեցման ազդեցությամբ հատվածները ներառվում են Իսակով-Արշակունյաց Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրում: Այս հատվածներում շինարարության մեկնարկը պայմանավորված կլինի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացմամբ և Ասիական զարգացման բանկի կողմից Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման Համապատասխանության հաշվետվության հաստատմամբ:

9. Ծրագրի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների վրա ազդեցություն չի նախատեսվում: Հատուկ ուշադրություն կդարձվի ոչ բարենպաստ պայմաններում գտնվող մարդկանց խմբերի կարիքների բացահայտմանը և լուծմանը, ինչպիսիք են՝ աղքատները, տարեցների, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրում ներառված միջոցառումների միջոցով բարելավելու նրանց կենսապայմանները (դրամական փոխհատուցումներից և վերականգնումից զատ):

Գլուխ 3

Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության և հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստում և իրականացում

10. Ծրագրի համար Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության և Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման գործողությունները Ծրագրի իրականացման անբաժանելի մասն են՝ սկսած հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սահմանման և ստուգման առաջադրանքներից մինչև մանրամասն նախագծի հիման վրա իրականացման պատրաստ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը:

11. 2022 թվականի հունիսից մինչև 2023 թվականի փետրվար ընկած ժամանակահատվածում իրականացված գործողությունների շրջանակը ներառում է հետևյալը.

- 1) Ծրագրի մանրամասն նախագծի հասանելի լինելուն պես՝ իրականացվել է նախնական կադաստրային հետազոտություն՝ բացահայտելու ազդակիր գույքերը և դրանց սեփականատերերին (օգտագործողներին), որի հիման վրա Կառավարությունն ընդունել է ազդակիր գույքերի նախնական ուսումնասիրության մասին որոշում.
- 2) Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իրականացվել են մանրամասն հետազոտություններ, ներառյալ՝ հողային/ոչ հողային ազդեցությունների մանրամասն չափագրման հետազոտություն, ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների և ազդեցության ենթարկված անձանց մարդահամար ու սոցիալ-տնտեսական և ազդեցության ենթակա ակտիվների գնահատման հետազոտություններ անկախ գնահատողի ծառայությունների միջոցով: Իրականացվել է նաև Ծրագրի օտարման գծից դուրս՝ 70-100 մ հեռավորության վրա գտնվող բազմաբնակարան շենքերի տնային տնտեսությունների մարդահամար՝ Ծրագրի տարածքի հարևանությամբ գոյություն ունեցող խոցելի տնային տնտեսությունները բացահայտելու նպատակով.
- 3) Սոցիալական համալիր ստուգման հաշվետվությունը պատրաստված է հողի օտարումից և տարաբնակեցումից ազատ տարածքների համար՝ մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցության ենթարկված հողամասերի գույքագրման արդյունքների հիման վրա.
- 4) Իրականացվել է Ծրագրի շրջանակներում բոլոր ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտությունը՝ Ասիական զարգացման բանկի պահանջների համահունչ: Սոցիալ-տնտեսական հետազոտությունն իրականացվել է նաև Ծրագրի տարածքի հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքերի մարդահամարի ընթացքում հայտնաբերված խոցելի տնային տնտեսությունների հետ՝ խոցելի կամ հաշմանդամություն ունեցող

1 Սոցիալ տնտեսական հետազոտությունը ներառել է ազդակիր բնակչության հիմնական սոցիալ-տնտեսական հատկանիշների նկարագրությունը (էթնիկ կազմ, կրթական մակարդակ, կենսապահովման եղանակներ և եկամտի աղբյուրներ, աղքատության/եկամտի մակարդակներ, բնակարանների տեսակ, արժեք և հողային սեփականության տեսակներ): Վերջինիս հիմնական նպատակներից մեկը իրականացման ազդեցությունների

անձանց բացահայտելու և մեղմացնող միջոցառումներ ապահովելու նպատակով.

- 5) Հետազոտությունների հիման վրա կազմվել է Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախագիծ: Ուսումնասիրությունների ընթացքում բոլոր ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները պատշաճ տեղեկացվել են սույն Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի դրույթների և պայմանների մասին, ներառյալ՝ ազդեցությունները, փոխհատուցման դրույքաչափերը և ժամանակացույցը: Մանրամասն չափագրման հետազոտությունը, ազդեցության ենթարկված անձանց մարդահամարը և փոխհատուցման արժեքները վերանայվել և թարմացվել են մանրամասն նախագծի վերջնականացումից հետո:

12. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման կամ իրականացման մասով՝

- 1) այն նախապատրաստվել է Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատուի կողմից 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին (Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ստանդարտ նկարագիրը տրված է Կետ 15-ում):
- 2) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը կվերանայվի և կվերջնականացվի ՀՕՏՀ-ն հաստատվելուց և ուժի մեջ մտնելու հիմքով: ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի N 1357-Ն որոշմամբ հաստատվել է հանրության գերակա շահ ճանաչված գույքերի ցանկը: Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի կասեցման օր է հայտարարվել 2023 թվականի հոկտեմբերի 13-ը, որը հանդիսանում է ազդեցության ենթակա գույքերի նկարագրության արձանագրությունների կազմման գործընթացի մեկնարկի ամսաթիվը: Այս փուլը ներառում է ազդեցության ենթարկված անձանց տվյալների վերջնական թարմացումները, հնարավոր փոխհատուցման դրույքաչափերի վերանայումները և օրինականացման իրավունք ունեցող ազդեցության ենթարկված անձանց օրինականացման վարչական աշխատանքները: Ասիական զարգացման բանկի կողմից Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնական տարբերակը հաստատվելուց հետո կկնքվեն շինարարական աշխատանքների պայմանագրեր:
- 3) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացումը կմեկնարկի ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից ՀՕՏՀ-ն հաստատվելուց հետո և կեզրափակվի բոլոր ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին պատշաճ փոխհատուցումների տրամադրմամբ: Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման գործընթացը կվերահսկի Արտաքին մոնիթորինգային գործակալությունը, որը կներգրավվի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից մրցութային հիմունքներով՝ հատվածական մոտեցումից ելնելով:

13. Շինարարական աշխատանքները կմեկնարկեն, և Կապալառուին շինարարական

գնահատման համար հիմք ստեղծելն է, ինչպես նաև հայտնաբերել խոցելի և ռիսկային խմբեր, որոնք կարիք ունեն լրացուցիչ աջակցության, որպես Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի բյուջեի կազմման հիմք:


աշխատանքներին ընթացք տալու համաձայնություն կտրվի միայն, երբ բոլոր ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները փոխհատուցվեն և Արտաքին մոնիթորինգի գործակալության կողմից պատրաստված համապատասխանության հաշվետվությունը հաստատվի Ասիական զարգացման բանկի կողմից:

14. Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության պատրաստման շրջանակներում հարկադիր տարաբնակեցման ազդեցությունների ստուգումն իրականացվել է 2022 թվականի օգոստոս-սեպտեմբեր ժամանակահատվածում՝ համալիր ստուգում (due diligence) իրականացնելու համար: Դիտարկվել և վերլուծվել են և՛ մշտական, և՛ ժամանակավոր ազդեցությունները մանրամասն չափագրման ուսումնասիրության և ազդակիր հողատարածքների գույքագրման միջոցով: Հայտնաբերվել է առանց հողի օտարման և տարաբնակեցման ազդեցության 3 հատված, որոնց համար պատրաստվել է Սոցիալական համալիր ստուգման հաշվետվություն և ներկայացվել Ասիական զարգացման բանկին 2022 թվականի հոկտեմբերի 31-ին: Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի քարտեզը՝ հողի օտարման և տարաբնակեցման ազդեցությունից ազատ հատվածների նշմամբ, ներկայացված է Պատկեր 1-ում: Սոցիալական համալիր ստուգման հաշվետվությունը՝

- 1) ներկայացնում է հողի օտարմանն ու տարաբնակեցմանն առնչվող մշտական և ժամանակավոր ազդեցությունների բացակայությունը Ծրագրի 3 հատվածներում հարկադիր տարաբնակեցման տեսանկյունից՝ Ասիական զարգացման բանկի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (2009 թվական) պահանջներին համապատասխան,
- 2) նշում է այն տարածքը, որտեղ կարելի է մեկնարկել շինարարական աշխատանքները ճշգրիտ ցցանիշերով (պիկետներ) և երկարությամբ,
- 3) ներկայացնում է մեղմացնող միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն՝ երաշխավորելու հանրության պատշաճ տեղեկացվածությունը շինարարության մեկնարկի մասին և մեղմելու շինարարության ընթացքում առաջացած հնարավոր ազդեցությունները:

15. Ասիական զարգացման բանկի կողմից Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության-ի հաստատումից հետո տվյալ հատվածներում շինարարական աշխատանքները կարող են մեկնարկել պայմանագրերի ստորագրումից անմիջապես հետո: Պայմանագրի ստորագրումն ինքնին պայմանավորված է Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնականացմամբ:

**Պատկեր 1. Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի քարտեզ՝ հողի օտարման
և տարաբնակեցման ազդեցությունից ազատ տարածքների նշմամբ**



Գլուխ 4

Հողի օտարման և տարաբնակեցման իրավական հիմքերը

16. ՀՀ Սահմանադրությունը ճանաչում և պաշտպանում է մասնավոր սեփականության իրավունքը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

17. Հողի օտարման և փոխհատուցման հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 102-րդ հոդվածի 8-րդ մասով, 104-րդ հոդվածով և «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ հողի օտարման և տարաբնակեցման ազգային օրենսդրություն):

18. Օտարվող հողի կամ գույքի հատուցումը սահմանվում է Երևանի քաղաքապետարանի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և Ազդեցության ենթարկված անձանց միջև համաձայնությամբ՝ հաշվի առնելով շուկայական արժեքը և վնասները, ներառյալ՝ հետևանքային վնասները, և այն կարող է ներառել հողի կամ գույքի փոխարինում: Սեփականատիրոջն իր սեփականության օտարման դիմաց պետք է վճարվի համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15%-ով ավել գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գնահատումը կատարվում է «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

19. Հարկադիր վերաբնակեցման մասով Ասիական զարգացման բանկի

քաղաքականության հիմնարար սկզբունքներն են՝

- 1) հարկադիր վերաբնակեցումից խուսափելը կամ առնվազն նվազագույնի հասցնելը,
- 2) Ազդեցության ենթարկված անձանց՝ մինչև ծրագիրն ունեցած կենսամակարդակը պահպանող փոխհատուցման և վերականգնման պայմաններ ապահովելը,
- 3) Ազդեցության ենթարկված անձանց լիովին տեղեկացվելն ու նրանց հետ հողի օտարման և տարաբնակեցման փոխհատուցման տարբերակների խորհրդակցումը,
- 4) Ազդեցության ենթարկված անձանց սոցիալ-մշակութային ինստիտուտների օգտագործումը,
- 5) կորցրած ակտիվների փոխհատուցումը փոխարինման արժեքի չափով կամ հողի և կորցրած այլ ակտիվների նույն տեսակով փոխարինումը,
- 6) կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքով փոխհատուցումը,
- 7) իրավական կարգավիճակի բացակայությունը փոխհատուցման կամ վերականգնման համար խոչընդոտ չհանդիսանալը .
- 8) կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին հատուկ, ինչպիսիք են ազգային փոքրամասնությունները, ուշադրությունը, և իրենց կարգավիճակը բարելավելու համար նրանց պատշաճ աջակցության տրամադրումը,
- 9) Հողի օտարման և տարաբնակեցման ընկալումն ու իրականացումը որպես ծրագրի մաս, և փոխհատուցման ընդհանուր ծախսերի ներառումը ծրագրի ծախսերում և օգուտներում,
- 10) նախքան օտարման գոտու մաքրումը կամ հողահարթեցումը և քանդումը փոխհատուցման ու տարաբնակեցման սուբսիդիաների լիարժեք տրամադրումը:

20. Հողի օտարման և տարաբնակեցման ազգային օրենսդրության և Ասիական զարգացման բանկի քաղաքականության միջև առկա որոշակի տարբերություններն առնչվում են ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների վերականգնման հստակությանը, տիտղոս ունեցող և չունեցող անձանց կամ գրանցված և չգրանցված վարձակալներին կամ օգտագործողներին փոխհատուցում կամ առնվազն վերականգնում ստանալու իրավասությանը և այլն (ազգային օրենսդրության և Ասիական զարգացման բանկի քաղաքականության միջև հիմնական տարբերությունները տրվում են Աղյուսակ 1-ում):

Աղյուսակ 1. Տարաբնակեցման կառուցակարգերի համեմատական

	Ազգային օրենսդրություն	ԱԶԲ քաղաքականություն
Փոխհատուցման առարկան	Միայն հողի նկատմամբ տիտղոսային իրավունք ունեցողների համար	Տիտղոսի բացակայությունը խոչընդոտ չէ փոխհատուցման կամ վերականգնման համար: Նման դեպքում նախատեսված է վերականգնման օժանդակություն:
Վնասի/քանդման դիմաց փոխհատուցումը	Միայն օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած շենք/շինությունների համար	Ներառում է նաև փոխհատուցում չգրանցված շենք/շինությունների համար
Բերքի կորստի դիմաց փոխհատուցումը	Միայն գրանցված հողերի սեփականատերերին	Բոլոր ազդեցության ենթարկված անձանց
Հողի գնահատման մեթոդը	Գործող շուկայական արժեքի հիման վրա՝ գնահատված արժեքի 15 տոկոս հավելումով	Գործող շուկայական դրույքաչափերի/փոխարինման արժեքի հիման վրա
Ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին և ազդեցության ենթարկված անձանց տեղեկատվության տրամադրումը	Ազդեցության չափի/արժեքի, իրավունքների, փոխհատուցման ու աջակցության գումարների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի նախքան գնահատման իրականացումը	
Հավելյալ աջակցող միջոցառումներ	Եկամտի կամ կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ, խիստ ազդեցության ենթարկված ազդեցության ենթարկված անձանց և խոցելի խմբերի համար օժանդակություններ կամ տարաբնակեցման ծախսեր չեն նախատեսվում:	Պահանջում է եկամտի կամ կենսամիջոցների, խիստ կորուստների, ազդեցության ենթարկված անձանց կողմից տեղափոխման ընթացքում կրած ծախսերի վերականգնում:

21. Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի միջոցով համահարթեցվում են առկա շեղումները՝ ապահովելով բոլոր միավորների փոխհատուցումն ամբողջական փոխարինման արժեքի չափով, իսկ ապօրինի կամ իրավական կարգավիճակ չունեցող բնակիչների, չգրանցված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների համար՝ առնվազն վերականգնումը: Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը նաև տրամադրում է վերականգնման փաթեթներ խոցելի կամ խիստ ազդեցության ենթարկված վերաբնակեցվող ազդեցության ենթարկված անձանց համար:

22. Մասնավոր սեփականություն հանդիսացող հողն առաջին հերթին անհրաժեշտ է փորձել օտարել ազդեցության ենթարկված անձանց հետ բանակցությունների հիման վրա: Եթե բանակցությունները ձախողվում են, պետք է կիրառել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման գործընթացը: Բանակցությունների արդյունքով գնման դեպքում Ասիական զարգացման բանկը պահանջում է, որ համապատասխան ուսումնասիրություն իրականացվի՝ երաշխավորելու, որ ազդեցության ենթարկված անձանց առաջարկվել է արդար գին, վերջինս տեղեկացված է, ընձեռվել է բավարար սակարկությունների հնարավորություն և, որ գործը վերահսկվում է անկախ արտաքին կողմի կողմից: Այս պայմանները լիովին երաշխավորվում են Արտաքին մոնիթորինգի կիրառմամբ և ակտիվների փոխհատուցման դրույքաչափերը որոշելու

համար հողի անկախ գնահատողներ ներգրավելու՝ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությամբ:

Գլուխ 5

Ծրագրի շրջանակներում կիրառվող հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքներն ու իրավասությունները

23. ՀՀ օրենքների և ԱԶԲ 2009 թվականի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի հիման վրա Ծրագրի շրջանակներում կիրառվող Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավունքներն են՝

- 1) Հողերի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցությունները կկանխվեն կամ նվազագույնի կհասցվեն՝ ուսումնասիրելով Ծրագրի բոլոր հնարավոր այլընտրանքային լուծումները,
- 2) եթե հողի օտարումը և տարաբնակեցումն անխուսափելի են, կպատրաստվի սահմանված ժամկետով ՀՕՏԾ, իսկ ազդեցության ենթարկված անձանց կտրամադրվի աջակցություն՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու նախքան Ծրագրի մեկնարկն ունեցած կենսամակարդակը,
- 3) ազդեցության ենթարկված անձանց կտրամադրվի փոխհատուցումների վերաբերյալ խորհրդատվություն և վերաբնակեցման գործընթացի մասին մանրամասն տեղեկատվություն: Ազդեցության ենթարկված անձանց ակտիվ մասնակցությունը Ծրագրի պլանավորման և իրականացման փուլում կլինի անխուսափելի: Հատուկ ուշադրություն կդարձվի նախագծի վերաբերյալ ազդեցության ենթարկված անձանց տեսակետների հավաքագրմանը, ինչպես նաև մոնիթորինգային գործողություններում ներգրավմանը,
- 4) խոցելի և խիստ ազդակիր ազդեցության ենթարկված անձանց կտրամադրվի հատուկ աջակցություն,
- 5) կորցրած ակտիվների դիմաց կտրամադրվի փոխարինման արժեքի չափով փոխհատուցում կամ հողի և կորցրած այլ ակտիվների նույն տեսակով փոխարինում,
- 6) իրավական կարգավիճակ չունեցող ազդեցության ենթարկված անձինք (օրինակ՝ ապօրինի բնակվողներ կամ զավթումներ, ինչպես նաև գրանցման տվյալներ չունեցող ազդեցության ենթարկված անձինք) հողի դիմաց փոխհատուցման փոխարեն կստանան կենսապահովման օժանդակություն և լիարժեք փոխհատուցում հողից բացի այլ կորուստների համար,
- 7) օրինականացման իրավունք ունեցող ազդեցության ենթարկված անձանց իրավունքները կօրինականացվեն, և նրանց կտրամադրվի լիարժեք փոխհատուցում հողի կորստի համար,
- 8) կապահովվի եկամուտների վերականգնումը,
- 9) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրն ազդեցության ենթարկված անձանց կտրամադրվի հայերեն,
- 10) փոխհատուցման վճարումը և տարաբնակեցման աջակցությունն ամբողջությամբ

կտրամադրվեն և վերականգնողական միջոցառումները կիրականացվեն նախքան կապալառուի կողմից հողի փաստացի ֆիզիկական տնօրինումը և որևէ կոնկրետ փաթեթի վրա շինարարական աշխատանքների մեկնարկը,

11) ազդեցության ենթակա անձանց բողոքները լուծելու համար կստեղծվեն բողոքների լուծման համապատասխան մեխանիզմներ:

Գլուխ 6

Ծրագրի ներքո փոխհատուցում ստանալու իրավասությունն ու իրավունքները

24. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն ըստ փոխհատուցում ստանալու իրավասության և իրավունքների շրջանակի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին ու Ասիական զարգացման բանկի քաղաքականությանը համահունչ: Փոխհատուցման չափը որոշվում է գույքի շուկայական արժեքի հիման վրա, իսկ եթե շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ կադաստրային արժեքը) գերազանցում է գույքի շուկայական արժեքը, ապա հիմք է ընդունվում շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ կադաստրային արժեքը): Իրավունքների մատրիցան տրվում է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Իրավունքների մատրիցա

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
1.	Հող	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, որոնք կորցնում են հողերը՝ անկախ ազդեցության չափից	Սեփականատերեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեք + 15%՝ շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է): Եթե չկան ակտիվ հողի շուկաներ, ապա դրամական փոխհատուցումը պետք է հիմնվի հողի տարեկան արտադրանքի արժեքի վրա՝ բավարար թվով տարիների համար՝ ապահովելու ազդակիր կողմերի վերականգնում իրենց հողի կորստի համար
			Օրինականացման իրավունք ունեցող ազդեցության	Օրինականացման իրավունք ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
			ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ կարող են գրանցել հողի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը և փոխհատուցվել որպես սեփականատերեր
			Վարձակալ (համայնքային կամ պետական հողամասի վարձակալություն և ենթավարձակալություն)	Վարձակալի իրավունքը կարող է գրանցվել և փոխհատուցվել ինչպես լիիրավ սեփականատիրոջը՝ ստանալով շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է) կամ նրան կտրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից կստանա «ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) + 15%» համարժեք փոխհատուցում հետևյալ համամասնությամբ՝ ըստ վարձակալության ժամկետի՝ 1) < 1 տարի՝ 5%, 2) < 15 տարի՝ 14%, 3) < 25 տարի՝ 20%, 4) > 25 տարի՝ 25%:
			Վարձակալ (մասնավոր հողատարածքի վարձակալություն և ենթավարձակալություն)	Փոխհատուցում արդեն վճարված, բայց չօգտագործված, վարձավճարի և վարձատուփ համաձայնությամբ կատարված բոլոր բարելավումների համար
			Օրինականացման իրավունք չունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կստանան վերականգնման

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
			ենթարկված տնային տնտեսություններ	օժանդակություն, որը հավասար է ազդակիր հողամասի շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է) 25%-ին
2.	Բնակելի շինություններ		Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները՝ անկախ իրավական կարգավիճակից	Դրամական փոխհատուցում +15% շինության կորստի համար լրիվ փոխարինման արժեքով (որը պետք է լինի շուկայական արժեքից ոչ պակաս)՝ առանց մաշվածության/գործարքի ծախսերի և ապամոնտաժված նյութերի: Մասնակի ազդեցությունների դեպքում փոխհատուցում կտրամադրվի շինության ազդակիր հատվածի և վերանորոգման համար (ազդեցության ենթարկված անձանց համաձայնությամբ):
			Վերաբնակեցվող վարձակալներ	Խիստ ազդեցության և վերաբնակեցման օժանդակություններ՝ ըստ 9, 10, 11 կետերով նախատեսված իրավունքների: Դրամական փոխհատուցում արդեն իսկ վճարված, սակայն չօգտագործված, վարձավճարի և վարձատուի համաձայնությամբ կատարված բոլոր բարելավումների համար:
3.	Ոչ բնակելի շինություններ/ գույքեր		Պատշաճ գրանցում ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Դրամական փոխհատուցում + 15% շինության կորստի համար լրիվ փոխարինման արժեքով (որը պետք է լինի շուկայական արժեքից ոչ պակաս)՝ առանց մաշվածության/ գործարքի ծախսերի և

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
				ապամոնտաժված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում կտրամադրվի շինության ազդակիր հատվածի և վերանորոգման համար (ազդեցության ենթարկված անձանց համաձայնությամբ):
			Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող կամ Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անօրինական շինություններ ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Դրամական փոխհատուցում շինության կորստի համար լրիվ փոխարինման արժեքով (որը պետք է լինի շուկայական արժեքից ոչ պակաս)՝ առանց մաշվածության, գործարքի ծախսերի և ապամոնտաժված նյութերի:
			Վերաբնակեցվող վարձակալներ	Խիստ ազդեցության և վերաբնակեցման օժանդակություններ՝ ըստ 9, 10, 11 կետերով նախատեսված իրավունքների: Դրամական փոխհատուցում արդեն իսկ վճարված, սակայն չօգտագործված, վարձավճարի և վարձատուի համաձայնությամբ բոլոր բարելավումների համար:
4.	Հանրային գույք	Համայնքային կամ պետական գույք	Համայնք կամ պետություն	Կորցրած կառույցի վերակառուցում և դրա գործառույթների վերականգնում՝ խորհրդակցելով համայն-

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
				քային/պետական իրավասու մարմինների հետ
5.	Հանրային հաղորդուղիների ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրաէներգիա և այլն) և մասնավոր կազմակերպությունների պատկանող ենթակառուցվածքային շինություններ	Մասնավոր սեփականություն	Կոմունալ ծառայության ենթակառուցվածքի սեփականատերեր կամ օպերատոր	Կորցրած կառույցի վերակառուցում և դրա գործառույթների վերականգնում՝ խորհրդակցելով համայնքային/ պետական իրավասու մարմինների և կոմունալ ծառայությունների ենթակառուցվածքների սեփականատերերի կամ օպերատորների (եթե կիրառելի է) հետ: Բոլոր նման ենթակառուցվածքները կարտացոլվեն նախագծանախահաշվային փաստաթղթերում
6.	Բերք	Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատերերը և կացության կարգավիճակ չունեցող օգտագործողները)	Մեկ տարվա բերքի փոխհատուցում՝ հաշվարկված շուկայական արժեքով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
7.	Ծառեր	Ազդեցության ենթարկված ծառեր	Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա	Շուկայական արժեքով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ ելնելով ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից:

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
			սեփականատերերը և կացության կարգավիճակ չունեցող օգտագործողները)	
8.	Ձեռնարկատիրական գործունեության կամ աշխատանքի կորուստ	Ձեռնարկատիրական գործունեության, աշխատանքի կորուստ	Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատերերը և կացության կարգավիճակ չունեցող օգտագործողները)	<p>Սեփականատեր՝</p> <p>1. մշտական ազդեցություն՝ 1 տարվա զուտ եկամտի դրամական փոխհատուցում, 2. ժամանակավոր ազդեցություն՝ զուտ եկամտի դրամական փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների համար՝ մինչև 1 տարի: Գնահատումն իրականացվելու է հարկային հայտարարագրի հիման վրա: Հարկային հայտարարագրի բացակայության դեպքում ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը կստանա վերականգնման օժանդակություն՝ հիմնված առավելագույն չհարկվող աշխատավարձի վրա՝ մինչև 1 տարի ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների համար: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին:</p> <p>Աշխատողներ՝ փոխհատուցում 1. աշխատանքի մշտական կորստի պարագայում՝ 6 ամսվա միջին ամսական աշխատավարձի (<< աշխատանքային օրենսգրքի սահմանված կարգով հաշվարկված) չափով, 2. ժամանակավոր կորստի պարագայում՝ միջին ամսական աշխատավարձի (<< աշխատանքային</p>

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
				օրենսգրքի սահմանված կարգով հաշվարկված) չափով մինչև 6 ամիս աշխատատեղի կորստի ամիսների քանակի համար:
9.	Տեղափոխման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման համար	Ազդեցության ենթակա հողի/ շենքի վրա շարժական գույք ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները, որոնք պետք է տեղափոխվեն՝ անկախ սեփականության իրավունքից	Փոխադրման, բեռնման և բեռնաթափման ծախսերը ծածկելու համար դրամական օժանդակություն, որը կորոշվի տվյալ տարածքի շուկայի ուսումնասիրության հիման վրա և կտրամադրվի որպես միանվագ վճար:
10.	Օժանդակություն խիստ ազդեցությունների համար	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը, որոնք կորցնում են եկամտի 10 կամ ավելի տոկոսը, կամ արտարդրական ակտիվները կամ ենթակա են վերաբնակեցման	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր տնային տնտեսությունները, ներառյալ՝ ապօրինի բնակիչները և վերաբնակեցվող վարձակալները Առևտրային կամ ձեռնարկատիրական ընկերություններ կամ եկամտի աղբյուր հանդիսացող այլ գույք կորցնող ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Բերքի լրացուցիչ փոխատուցում, որ ծածկում է հողի ազդակիր մասի 1 տարվա բերքը: Վերականգնման օժանդակություն 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի (սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ) չափով: Վերականգնման օժանդակություն 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի (սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ) չափով:
11.	Վերաբնակեցման օժանդակություն		Վերաբնակեցվող բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, ներառյալ՝	Տրանսպորտային ծախսերը և 1 ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար ֆինանսական միջոցների տրամադրում:

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
			վերաբնակեցվող վարձակալները	
12.	Օժանդակություն խոցելի անձանց համար		Կանանց, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ և անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից ցածր եկամուտով ապրող ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձին (սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ) համարժեք օժանդակություն և ծրագրին առնչվող աշխատատեղերում աշխատանքի առաջնահերթություն:
13.	Ժամանակավոր ազդեցություններ		Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները	Ժամանակավոր ազդեցության ենթարկվող ակտիվների համար կտրամադրվեն համապատասխան վարձավճար և վերականգնում:
14.	Ժամանակավոր ազդեցություններ հաղորդուղիների տեղափոխման արդյունքում	Բոլոր ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների կորուստները՝ նրանց իրավական կարգավիճակից ելնելով	Սեփականատերեր	Փոխհատուցում տրամադրվելու է և՛ հողի, և՛ բարելավումների համար, ինչպես մշտական ազդեցությունների պարագայում:
			Օրինականացման իրավունք չունեցող ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Փոխհատուցում տրամադրվելու է միայն ազդակիր հողամասի վրա օգտագործողների կողմից կատարված բարելավումների համար, ինչպիսիք են ծառերը, մշակաբույսերը, ցանկապատները և այլն: Այս դեպքում օգտագործողներին չի տրամադրվի որևէ օժանդակություն հողի ապօրինի օգտագործման համար. այնուամենայնիվ, այս հողերը պետք է ծածկվեն ու վերադարձվեն

NN	Կորստի տեսակ	Կիրառություն	Ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ	Իրավունքներ
				օգտագործողներին:
15.	Չնախատեսված հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններ՝ առկայության դեպքում		Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները	Ծրագրի իրականացման ընթացքում Երևանի քաղաքապետարանը հաշվի կառնի չնախատեսված հողի օտարման և տարաբնակեցման ազդեցությունները, (ներառյալ՝ մուտքի չնախատեսված սահմանափակումները) և փոխհատուցում և վերականգնում կտրամադրի՝ վերոնշյալ դրույթների հիման վրա և համաձայն 2009 թվականի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի և Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի մեթոդաբանության: Շինարարական աշխատանքների ընթացքում Կապալառուի (ենթակապալառուի) կողմից հասցված վնասը կփոխհատուցվի սույն ՀՕՏՀ-ին համապատասխան:
16.	Փոխհատուցում բարելավումների համար	Բարելավումներ, որոնք ներառված չեն սույն մատրիցայում, սակայն առկա են ազդակիր հողի վրա (բացառությամբ շարժական գույքերի)	ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, որ կատարել են բարելավումները՝ անկախ իրավական կարգավիճակից	Դրամական փոխհատուցում փոխարինման արժեքի չափով

25. Ծրագրի շրջանակում փոխհատուցման կամ առնվազն վերականգնման դրույթների նկատմամբ իրավունքներ ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններն են.

- 1) հողատարածք կորցնող՝ անկախ իրավական կարգավիճակից,
- 2) վարձակալներ և բաժնեմշակողներ՝ անկախ գրանցված լինելուց,
- 3) շենքերի, բերքի, բույսերի կամ հողին կցված այլ օբյեկտների սեփականատերեր,
- 4) ձեռնարկատիրական գործունեությունը, ապաստանը, եկամուտը կամ

աշխատավարձը կորցնողներ:

26. Փոխհատուցման իրավունքը կսահմանափակվի Ծրագրի համար սահմանված կասեցման օրով, որը նույնն է բոլոր ազդեցության ենթարկված անձանց համար՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից, այն է՝ ազդակիր գույքի կամ ակտիվների նկարագրության արձանագրությունների կազմման առաջին օրը (և ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների ու Ձեռքբերողի կողմից արձանագրությունների ստորագրման առաջին օրը): Կկազմակերպվի հանրային խորհրդատվություն կամ լուսմներ, և կասեցման օրը պաշտոնապես կհայտարարվի: «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը գրավոր կտեղեկացնի ազդեցության ենթարկված անձանց կասեցման օրվա մասին, ինչպես նաև՝ կձանուցի ստորագրված նկարագրության արձանագրության 1 օրինակը: Ազդակիր տարածքներում կասեցման օրվանից հետո բնակություն հաստատող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները փոխհատուցման իրավունք չեն ունենա: Այնուամենայնիվ, նրանք նախապես պատշաճ կերպով կձանուցվեն՝ տարածքներն ազատելու և ազդակիր կառույցները մինչև ծրագրի իրականացումն ապամոնտաժելու խնդրանքով: Նրանց ապամոնտաժված կառույցների նյութերը չեն առգրավվի, ինչպես նաև նրանք չեն վճարի որևէ տուգանք, կամ նրանց հանդեպ չի կիրառվի որևէ պատժամիջոց:

27. Հող, տներ և եկամուտի ու վերականգնման սուբսիդիաներ կորցնող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների իրավասության պայմանները կներառեն հողի մշտական կամ ժամանակավոր կորուստների, շենքերի, բերքի և ծառերի կորուստների դրույթներ, վերաբնակեցման սուբսիդիա, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության կորուստների փոխհատուցում՝ հարկային հայտարարագրերի կամ միանվագ վճարումների հիման վրա: Մասնավորապես՝

1) Հողի վրա ազդեցություններ՝

ա. հողի սեփականատերերը դրամական փոխհատուցում կստանան գործող շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%: Եթե չկա գործող հողի շուկա, դրամական փոխհատուցումը կհիմնվի հողի տարեկան արտադրանքի արժեքի վրա բավարար տարիների համար՝ ապահովելու ազդակիր կողմերի վերականգնում իրենց հողերի կորստի համար: Հողամասի՝ ոչ անմիջականորեն ազդեցության ենթարկված և ազդեցությունից հետո անհասանելի կամ մշակման կամ ցանկացած օգտագործման համար անպիտան դարձած հատվածները կներառվեն ազդեցության ենթարկված հողերի մեջ,

բ. օրինականացման իրավունք ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կօրինականացվեն ու փոխհատուցում կստանան՝ որպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերեր՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու դեպքում,

գ. օրինականացման իրավունք չունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ

ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կստանան դրամական փոխհատուցում՝ միանվագ վերաբնակեցման օժանդակության տեսքով՝ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է) 25 %-ի չափով,

դ. համայնքային կամ պետական հողերի վարձակալները (վարձակալություն և ենթավարձակալություն) կփոխհատուցվեն որպես լիիրավ սեփականատերեր կամ կապահովվեն նոր վարձակալությամբ: Եթե դա հնարավոր չէ, ապա նրանք կստանան փոխհատուցում՝ ազդակիր հողի շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ կադաստրային արժեք) (որն ավելի բարձր է) + 15% չափով, վարձակալության մնացած տարիների համամասնությամբ հետևյալ կերպ՝ 1) < մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) < մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) < մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%,

ե. մասնավոր հողի վարձակալները (վարձակալություն և ենթավարձակալություն) կփոխհատուցվեն արդեն իսկ վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի համար, և վարձատուի համաձայնությամբ կատարված համալիր բարելավման համար:

2) Բնակելի շենքեր կամ շինություններ՝

ա. բնակելի տները կորցնող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կստանան դրամական փոխհատուցում՝ անկախ շենքի կամ շինության նկատմամբ իրավունքի պետական գրանցման փաստից կամ շենքի կամ շինության իրավական կարգավիճակից, փոխարինման արժեքի չափով՝ զումարած 15%: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության և գործարքի համար ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի՝ անկախ տուժած շենքի կամ շինության հաշվառման կարգավիճակից: Մասնակի ազդեցությունների դեպքում, եթե սեփականատերը չի ցանկանում տեղափոխվել, ապա փոխհատուցում կտրամադրվի միայն շենքի ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շենքի՝ ազդեցության չենթարկված հատվածի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Այս դեպքում շենքի վերանորոգման ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման:

բ. Վերաբնակեցվող վարձակալներին կտրամադրվեն տեղափոխման և խիստ ազդեցությունների համար նախատեսված բոլոր օժանդակությունները (տե՛ս ստորև), ինչպես նաև դրամական փոխհատուցում արդեն վճարված, սակայն չօգտագործված, վարձավճարի և վարձատուի համաձայնությամբ կատարված բոլոր բարելավումների համար:

3) Ոչ բնակելի շենքեր կամ շինություններ՝

ա. պատշաճ գրանցմամբ ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ՝ դրամական փոխհատուցում + 15%՝ շենքի կորստի համար ամբողջական փոխարինման արժեքի չափով (որը պետք է շուկայական արժեքից պակաս չլինի)՝ առանց մաշվածության և գործարքի ծախսերի և ապամոնտաժված նյութերի,

բ. օրինական հողի վրա կառուցված ապօրինի շենք կամ շինություններ ունեցող

ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ՝ ինչպես նախորդ կետում, սակայն առանց 15%-ի,

գ. ապօրինի հողի վրա կառուցված ապօրինի շենք կամ շինություններ ունեցող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ՝ փոխարինման արժեքին համարժեք վերականգնման օժանդակություն (առանց մաշվածության և գործարքի ծախսերի և ապամոնտաժված նյութերի),

դ. վերաբնակեցվող վարձակալներին կտրամադրվեն վերաբնակեցման և խիստ ազդեցությունների համար բոլոր օժանդակությունները (տե՛ս ստորև), ինչպես նաև դրամական փոխհատուցում արդեն վճարված, սակայն չօգտագործված, վարձավճարի և վարձատուփի համաձայնությամբ կատարված բոլոր բարելավումների համար:

4) Համայնքային կամ պետական ակտիվներ՝ համայնքային և պետական շենքերը ամբողջությամբ կփոխարինվեն կամ կվերականգնվեն՝ իրենց նախածրագրային գործառույթները իրականացնելու համար՝ խորհրդակցելով համայնքային կամ պետական իրավասու մարմինների հետ:

5) Հանրային ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրաէներգիա և այլն) և մասնավոր ընկերություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցներ՝

ա. հանրային ծառայությունները (գազ, ջուր, էլեկտրաէներգիա և այլն) և մասնավոր ընկերություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցները կվերականգնվեն՝ խորհրդակցելով համայնքային կամ պետական իրավասու մարմինների և կոմունալ ծառայության սեփականատիրոջ կամ օպերատորի (եթե կիրառելի է) հետ,

բ. նման ենթակառուցվածքները կարտացոլվեն նախագծանախահաշվային փաստաթղթերում և աշխատանքների շրջանակում ու կտեղափոխվեն,

գ. եթե կոմունալ ծառայությունները տեղափոխվում են սեփական հողամասի վրա, ապա փոխհատուցման համար կիրառվում են Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի դրույթները:

6) Ազդեցություն բերքի վրա՝ դրամական փոխհատուցում ընթացիկ շուկայական դրույքաչափերով 1 տարվա բերքի համախառն արժեքի համար: Բերքի դիմաց փոխհատուցում կտրամադրվի և՛ հողատիրոջը, և՛ վարձակալին՝ իրենց միջև բաժնեմշակման համաձայնության հիման վրա:

7) Ազդեցություն ծառերի վրա՝ դրամական փոխհատուցում շուկայական դրույքաչափով՝ ելնելով ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից:

8) Ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա՝

ա. մշտական կորուստների պարագայում (1 տարի կամ ավել) կտրամադրվի դրամական փոխհատուցում 1 տարվա զուտ եկամտի չափով՝ հարկային հայտարարագրի հիման վրա,

բ. ժամանակավոր կորուստների պարագայում կտրամադրվի դրամական փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակով՝ համարժեք հարկային հայտարարագրի հիման վրա հաշվարկված ամսական եկամտին,

գ. հարկային հայտարարագրի բացակայության դեպքում ազդեցության ենթակա անձիք կամ ազդեցության ենթակա տնային տնտեսությունները կփոխհատուցվեն վերը

նշվածի համաձայն՝ սակայն հիմնվելով առավելագույն չհարկվող աշխատավարձի վրա (նվազագույն աշխատավարձ),

դ. ձեռնարկատիրական գործունեության կորուստների համար փոխհատուցման մեթոդորդիան ներկայացված է սույն Հոդի օտարման և տարաբնակեցման շրջանակի Կետ 16-ում:

9) Աշխատանքի կորուստ՝ աշխատողները կստանան փոխհատուցում կորցրած աշխատավարձի դիմաց՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ժամանակահատվածի համար, մինչև առավելագույնը 6 ամիս:

10) Օժանդակություն խիստ ազդեցությունների դիմաց: Այս օժանդակությունը տրամադրվում է Ծրագրի խիստ ազդեցությունների համար՝

ա. ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին (ներառյալ ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները որպես վարձակալներ և փաստացի հողօգտագործողներ) այն դեպքերում, երբ նրանց սեփականության կամ մշակվող գյուղատնտեսական հողի 10%-ը կամ ավելին ենթարկվում է ազդեցության, և հողօգտագործման արդյունքում ստանում են օգուտներ, ինչպիսիք են պտուղները, բերքը և մշակաբույսերը: Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման հիմք է հանդիսանում այդ հողերի փաստացի օգտագործման նպատակը՝ անկախ կադաստրային տվյալներով, սեփականության իրավունքի վկայականներով և սեփականության իրավունքը հավաստող այլ փաստաթղթերով հողամասի նպատակային նշանակությունից: Եթե ոչ գյուղատնտեսական նշանակության հողն ազդեցության է ենթարկվում 10%-ով և ավել, բայց օգտագործվում է որպես արտադրողական գյուղատնտեսական հող, և փաստացի առկա են մշակաբույսեր և բերք, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման վերը նշված սկզբունքներին համապատասխան՝ առանց օրինականացման պահանջի դրույթի,

բ. վերաբնակեցվող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները (ներառյալ վերաբնակեցվող վարձակալները) կստանան վերականգնման (կենսամիջոցների վերականգնման) օժանդակություն խիստ ազդեցությունների համար, որը հավասար է 6 ամսվա առավելագույն չհարկվող աշխատավարձին (նվազագույն աշխատավարձ),

գ. եկամտի աղբյուր հանդիսացող ակտիվի 10%-ը կամ ավել կորցնող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կստանան վերականգնման (կենսամիջոցների վերականգնման) օժանդակություն խիստ ազդեցությունների համար, որ հավասար է 6 ամսվա առավելագույն չհարկվող աշխատավարձին (նվազագույն աշխատավարձ):

11) Վերաբնակեցման սուբսիդիա՝ վերաբնակեցվող ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները (ներառյալ՝ վարձակալները) կստանան տեղափոխման սուբսիդիա, որ կբավականացնի տրանսպորտի և ապրուստի 1 ամսվա ծախսերը հոգալու համար:

12) Խոցելի անձանց կենսամիջոցներ՝ խոցելի անձինք (ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, որոնք ապրում են անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից

ցածր եկամուտով, ազդեցության ենթարկված տնային տնտեսություններ, որոնք ղեկավարում են կանայք կամ տարեցները կամ հաշմանդամություն ունեցող անձինք) կստանան վերականգնման օժանդակություն՝ 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով: Ծրագրին առնչվող աշխատատեղերում նրանց կտրվի աշխատանքի առաջնահերթություն: Խոցելի անձինք են՝

ա. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված (փաստագրված) և անապահովության նպաստի իրավունք ունեցող տնային տնտեսությունները,

բ. տնային տնտեսությունները, որոնք ղեկավարում են ապրուստի միջոց վաստակող կանայք, և չեն ներառում այլ չափահաս անձ, զբաղվածություն ունեցող այլ աշխատունակ տարիքի անձ՝ առնվազն ամսական նվազագույն աշխատավարձ վաստակող, բացի՝ պարտադիր զինվորական ծառայության անցած անձանց կամ մինչև քսաներեք տարեկան ուսանողների,

գ. տնային տնտեսությունները, որոնք ղեկավարում են ծերության նպաստի իրավունք ունեցող անձինք, և չեն ներառում այլ չափահաս անձ, զբաղվածություն ունեցող այլ աշխատունակ տարիքի անձ՝ առնվազն ամսական նվազագույն աշխատավարձ վաստակող, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության անցած անձանց կամ մինչև քսաներեք տարեկան ուսանողների,

դ. տնային տնտեսությունները, որոնք ղեկավարում են հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք ունեն ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում, և չեն ներառում այլ չափահաս անձ, զբաղվածություն ունեցող այլ աշխատունակ տարիքի անձ՝ առնվազն ամսական նվազագույն աշխատավարձ վաստակող, բացառությամբ՝ պարտադիր զինվորական ծառայության անցած անձանց կամ մինչև քսաներեք տարեկան ուսանողների:

13) Եթե տնային տնտեսությունն ապրում է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից ցածր եկամուտով և միաժամանակ խոցելի է՝ համաձայն 12-րդ ենթակետում նկարագրված բ, գ, դ չափանիշների, ապա կտրամադրվի միայն մեկ վերականգնման օժանդակություն՝ 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

14) Եթե նկարագրության արձանագրությունների կազմման ընթացքում հայտնաբերվի, որ որոշ ազդակիր տնային տնտեսություններ աղքատ են, սակայն ներառված չեն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը պետք է դիմի Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոն՝ դրանք ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու (փաստագրելու) համար: Նման տնային տնտեսությունները օժանդակության իրավունք կստանան ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելուց (փաստագրվելուց) և անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռքբերելուց հետո:

15) Ժամանակավոր ազդեցության ենթարկված (Ծրագրին առնչվող հողօգտագործման

սահմանափակումների հետևանքով) ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին կտրամադրվի փոխհատուցում Հայաստանի Հանրապետությունում կիրառելի օրենսդրությամբ սահմանված՝ կորուստների և վնասների համար (լրիվ փոխարինման արժեքով) և Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի իրավունքների մատրիցի դրույթներին համապատասխան: Ժամանակավոր ազդեցության ենթարկված ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին տրվող փոխհատուցումը չի ներառի Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակով սահմանված վերականգնման օժանդակությունները:

16) Չնախատեսված հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններ, եթե այդպիսիք կան՝

ա. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը կդիտարկի հողի օտարման և տարաբնակեցման չնախատեսված ազդեցությունները ծրագրի իրականացման ընթացքում և փոխհատուցում և վերականգնման օժանդակություն կտրամադրի սույն հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի դրույթների հիման վրա: Նման դեպքերում կպատրաստվի Ուղղիչ գործողությունների պլան և կներկայացվի Ասիական զարգացման բանկին: Ուղղիչ գործողությունների պլանը կիրականացվի Ասիական զարգացման բանկի հաստատումից հետո,

բ. չնախատեսված ազդեցությունների դեպքում կկիրառվեն հողի օտարման և տարաբնակեցման շրջանակով սահմանված բոլոր ընթացակարգերը (Մանրամասն չափագրման հետազոտություն, Սոցիալ-տնտեսական հետազոտություն, մարդահամար և այլ անհրաժեշտ հետազոտություններ և իրավական ընթացակարգեր, ներառյալ անհրաժեշտության դեպքում թարմացված Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի կամ Ուղղիչ գործողությունների պլանի ի պատրաստում):

17) Փոխհատուցում բարելավումների համար. բարելավումները, որոնք ներառված չեն իրավունքների մատրիցում, սակայն առկա են ազդեցության ենթակա հողի վրա (բացառությամբ շարժական ակտիվների), կփոխհատուցվեն լրիվ փոխարինման արժեքով:

28. Ի լրումն վերը նկարագրված փոխհատուցման իրավունքների՝ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման փուլում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից կիրականացվեն կենսապայմանների վերականգնման հետևյալ գործողությունները.

- 1) իրավաբանական աջակցություն և խորհրդատվություն գույքի նկատմամբ իրավունքների և ժառանգության գրանցման հարցերում,
- 2) աջակցություն և խորհրդատվություն աշխատանք գտնելու հարցում, ընդ որում՝ ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները առաջնահերթություն կունենան Ծրագրին առնչվող աշխատանքներում,
- 3) ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային

տնտեսությունների նախասիրությունների ուսումնասիրության հիման վրա կանցկացվեն վերապատրաստումներ,

4) կվերականգնվի Կոմիտասի զբոսայգին,

5) Ծրագրի ֆինանսական միջոցների առկայության դեպքում կիրականացվեն այլ գործողություններ, որոնք կհամաձայնեցվեն կամ կպահանջվեն ազդակիր անձանց հետ խորհրդատվությունների և ֆոկլուս խմբերի քննարկումների ընթացքում:

29. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից կարիքների գնահատման հետազոտության արդյունքների հիման վրա կենսամիջոցների վերականգնման իրավունքները կպարզաբանվեն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրում, և կսահմանվի կենսամիջոցների վերականգնման վերապատրաստումների և դասընթացների շրջանակը: Այսպես.

1) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրի կորուստ՝ հողի կորստի պատճառով.

ա. աջակցություն գնման կամ օգտագործման համար այլընտրանքային հող գտնելու հարցում,

բ. աջակցություն օրինականացման իրավունք չունեցող ազդեցության ենթարկված անձանց, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան գնել կամ վարձակալել հող:

2) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրի կորուստ՝ բնակելի շենքերի և կառույցների կորստի պատճառով: Վերաբնակեցված տնային տնտեսությունները կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ աջակցությունը՝

ա. բնակության վայրի կամ բնակության վայրում գրանցման հարցում և նոր բնակության վայրերում կոմունալ ծառայությունների գրանցման հարցում,

բ. սոցիալական ենթակառուցվածքների հասանելիության հարցում, եթե բնակության վայրը փոխվել է (օրինակ՝ գրանցում դպրոցում, մանկապարտեզում կամ պոլիկլինիկայում),

գ. շինարարության ընթացքում ստեղծված աշխատատեղերում աշխատանքով ապահովման հարցում,

դ. նոր վարձակալությամբ կացարանի փնտրման հարցում (վերաբնակեցված վարձակալներ):

3) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրի կորուստ՝ ոչ բնակելի շենքերի ու կառույցների և ենթակառուցվածքների կորստի պատճառով: Ազդակիր ոչ բնակելի շենքերի սեփականատերերին կտրամադրվի կենսամիջոցների վերականգնման հետևյալ աջակցությունը՝

ա. ակտիվների տեղափոխման թույլտվությունների ստացման հարցում և խորհրդատվություն շինարարության թույլտվությունների, էլեկտրաէներգիայի ու ջրամատակարարման վերամիացումների անհրաժեշտության պարագայում,

բ. տեղափոխված ոչ բնակելի կառույցների վարձակալներին կտրամադրվի կենսամիջոցների վերականգնման աջակցություն նոր վարձակալության փնտրման հարցում:

4) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրի կորուստ՝ բերքի կորստի պատճառով: Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային

տնտեսությունները, որոնք տնկել են մշակաբույսեր ու կատարել են բարելավումներ՝ անկախ իրենց իրավական կարգավիճակից, կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ աջակցությունը՝

ա. հնարավորություն հավաքել բերքը նախքան հողի օտարումը,

բ. օգտագործման համար այլընտրանքային հող (ըստ հնարավորության) գտնելու հարցում,

գ. շինարարության ընթացքում Ծրագրի կողմից ստեղծված աշխատատեղերում աշխատանքով ապահովման հարցում:

5) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրի կորուստ՝ ծառերի, պտղատու այգիների կամ բերքի կորուստի պատճառով: Բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները, որոնք ունեցել են ծառեր կամ պտղատու այգիներ և կատարել են բարելավումներ (անկախ իրենց հողի սեփականության և գույքային իրավունքներից) կստանան աջակցություն շինարարության ընթացքում Ծրագրի կողմից ստեղծված աշխատատեղերում աշխատանքով ապահովման հարցում:

6) Եկամտի կամ կենսամիջոցների աղբյուրների կորուստ զբաղվածության կամ ձեռնարկատիրական գործունեության կորստի պատճառով: Ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին, ովքեր կորցրել են ձեռնարկատիրական գործունեություն կամ աշխատել են ազդակիր ձեռնարկատիրությունների համար (ընկերություն կամ անհատ ձեռնարկատերեր)՝ աշխատանքային պայմանագրի (կամ աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտի) հիման վրա, կտրամադրվի կենսամիջոցների վերականգնման աջակցություն:

ա. աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության մշտական կորստի դեպքում՝ աջակցություն շինարարության ընթացքում Ծրագրի կողմից ստեղծված աշխատատեղերում աշխատանքով ապահովման, մասնագիտական վերապատրաստումների, դասընթացների կամ այլնի հասանելիության հարցում,

բ. աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր կորստի դեպքում՝ աջակցություն մասնագիտական վերապատրաստումների, դասընթացների կամ այլնի հասանելիության հարցում:

30. Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գնահատումն իրականացվում է «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում» գնահատման ստանդարտները, ինչպես նաև՝ գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 1355-Ն որոշումով և սույն ՀՕՏՀ պահանջներով, որոնց համաձայն Ասիական զարգացման բանկի և ՀՀ կառավարության միջև տարբեր ազդեցությունների համար փոխհատուցման միավոր դրույքաչափերի գնահատման մեթոդաբանությունը հետևյալն է.

1) գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերը կգնահատվեն շուկայական արժեքով՝ ազդեցության ուսումնասիրությանը նախորդող տարվա ընթացքում հողի վաճառքի հետազոտության հիման վրա,

2) տները և շենքերը կգնահատվեն փոխարինման արժեքով՝ ելնելով շինության

տեսակից, նյութերի արժեքից, աշխատուժից, տեղափոխման և շինարարության այլ ծախսերից: Մաշվածության և գործարքի ծախսերի պահումներ չեն արվելու: Եթե ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները չեն ցանկանում տեղափոխվել, ապա կվճարվեն մասնակի ազդեցությունները միայն շենքի ազդակիր հատվածի կամ վերանորոգումների համար,

3) տարեկան բերքը կգնահատվի շուկայական (անմիջապես գյուղացուց) դրույքաչափերով առաջին տարվա բերքի համար: Այն դեպքում, երբ ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին պետք է տրվի ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջինից հետո բերքը կփոխհատուցվի համախառն շուկայական արժեքով,

4) ծառերը կգնահատվեն տարբեր մեթոդոլոգիաների համաձայն՝ կախված նրանից, թե ազդակիր ծառը փայտանյութի համար է, թե բերքատու է: Փայտանյութի համար կգնահատվեն՝ հիմնվելով տարիքային կատեգորիայի (ա. տնկի, բ. միջին հասունության ծառեր և գ. հասուն ծառեր) և փայտի արժեքի և ծավալի վրա: Մրգատու կամ բերքատու ծառերը կգնահատվեն՝ ելնելով տարիքից (ա. տնկի, բ. հասուն՝ ոչ մրգատու, և գ. հասուն մրգատու): (ա) և (բ) կարգի ծառերը փոխհատուցվելու են՝ ելնելով կատարված ներդրումների արժեքից, (գ) կարգի ծառերը փոխհատուցվելու են 1 տարվա եկամուտի զուտ շուկայական արժեքը բազմապատկած այն տարիների քանակով, որն անհրաժեշտ է նոր լրիվ պտղատու ծառ աճեցնելու համար:

31. Փոխհատուցման միավոր դրույքաչափերը կգնահատվեն հավաստագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պարզ և թափանցիկ մեթոդաբանությունների վրա: Հավաստագրված անկախ գնահատողը պատրաստում է գնահատման կամ հաշվարկների հաշվետվություններ բոլոր տեսակի գույքերի համար, որոնցում պետք է նշվեն բոլոր աղբյուրների ելակետային տվյալները և գնահատման ժամանակահատվածը՝ անկախ գնահատվող գույքի տեսակից:

32. Հողի ձեռքբերումը սեփականության օտարման վարույթով կապված է երկար ընթացակարգերի հետ և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Ծրագրի շրջանակներում նման մոտեցմամբ պետք է գործել միայն ծայրահեղ դեպքերում, երբ ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի միջև բանակցությունները ձախողվում են, և Ծրագիրն իրագործելու համար չկա մատչելի այլընտրանքային հող: Այնուամենայնիվ, նման դեպքերում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը չպետք է զբաղեցնի անհրաժեշտ հողամասերը մինչև՝

1) Փոխհատուցման և վերականգնման գումարները չեն փոխանցվել դատարանի դեպոզիտային հաշվին,

2) օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթաց չի նախաձեռնվել,

3) դատական կարգադրություն չի ստացվել և պատշաճ կերպով չի փոխանցվել ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին:

33. Ընդհանուր առմամբ հողամասերի բոլոր տիրապետողները կարող են օրենքով սահմանված կարգով և հիմքերի առկայության դեպքում դիմել իրավունքների պետական գրանցման, քանի դեռ վերջիններս չեն գրադեցնում «Կարմիր գոտիներ» դասակարգված տարածքներ (տարածքներ, որոնք պաշտոնապես վերապահված են հատուկ հանրային օգտագործման համար, ինչպիսիք են ռազմական տարածքները, հիվանդանոցային տարածքները, դպրոցական տարածքները կամ տարածքներ, որոնք պիտանի չեն բնակավայրերի համար (գետերի հուններ, ռադիոակտիվ տեղանքներ կամ այլ վտանգավոր կամ էկոլոգիապես ոչ պիտանի հողեր)² և համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պայմաններին:

34. Ձեռք բերված գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող բոլոր ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները (անձ, ով ունի ձեռքբերված գույքի նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթղթերը, սակայն դեռ չի գրանցել իր սեփականության իրավունքը) իրավասու են գրանցել իրենց սեփականության և գույքի ձեռքբերման հետ կապված այլ գույքային իրավունքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Ազդեցության ենթարկված անձինք կամ ԱԵՏՏ-ները, որոնք իրավունքներ ունեն ձեռք բերված գույքի նկատմամբ, սակայն օրենքով սահմանված կարգով չեն ապահովել դրա պատշաճ ձևակերպումը կամ պետական գրանցումը, իրավունք ունեն կամ ձեռք բերել իրավունքներ ազդեցության ենթակա գույքի նկատմամբ և ստանալ փոխհատուցում՝ համաձայն իրենց նոր ձևակերպված (գրանցված) իրավունքների, մինչև ձեռքբերման պայմանագրի կնքումը կամ մինչև համապատասխան դատական ակտի կայացումը:

36. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններն իրավունք ունեն սեփական նախաձեռնությամբ և հայեցողությամբ սկսել իրավունքների օրինականացման և պետական գրանցման գործընթացը: «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը խորհրդատվություններ կանցկացնի ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հետ և իր իրավասության շրջանակներում աջակցություն կցուցաբերի այն ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին, ովքեր կնախաձեռնեն օրինականացման գործընթաց:

37. Միաժամանակ՝ սույն Հոդվածի օտարման և տարաբնակեցման շրջանակը նախատեսում է օրինականացման խնդիրների լուծման ավելի պարզ ընթացակարգ.

1) ազդակիր ապօրինի բնակելի շինության դեպքում ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները չեն անցնի օրինականացման ընթացակարգը, այլ փոխհատուցում կստանան որպես օրինական սեփականատերեր (փոխարինման արժեքի 115%),

2) ազդակիր ոչ բնակելի շինությունների դեպքում ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կարիք չեն ունենա անցնել օրինականացման ընթացակարգը, և փոխհատուցման գումարը կվճարվի փոխարինման

² Տե՛ս ՀՀ հողային օրենսգիրքի հոդված 60

արժեքի չափով,

3) օրինականացման ենթակա առանց իրավական կարգավիճակի ազդակիր հողերի դեպքում ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կօրինականացվեն և կվճարվեն որպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերեր,

4) օրինականացման ոչ ենթակա ազդակիր հողի դեպքում ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կփոխհատուցվեն միանվագ դրամական օժանդակության տեսքով՝ համարժեք ազդակիր հողի շուկայական կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ կադաստրային արժեքի) (որն ամենաբարձրն է) 25%-ին:

Գլուխ 7

Հանրային խորհրդատվություն, մասնակցություն և փաստաթղթերի տրամադրում

38. Ըստ ԱԶԲ քաղաքականության՝ ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին պետք է տրամադրվի լիարժեք խորհրդատվություն, և հնարավորություն տրվի մասնակցելու հողերի օտարման և տարաբնակեցման պլանավորմանն ու իրականացմանը: Նրանք նաև պետք է պատշաճ և ժամանակին տեղեկացվեն պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև՝ ՀՕՏԾ իրականացման ժամանակացույցերի և ընթացակարգերի մասին: Հանրային տեղեկատվության և խորհրդատվական քարոզարշավը պետք է իրականացվի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից հողի օտարման և տարաբնակեցման գործընթացի բոլոր փուլերում: Ի հավելումն, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը պետք է նաև կազմակերպի հանրային իրազեկման հանդիպումներ, ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մասնակցությունը մանրամասն չափագրման հետազոտությանը, ՀՕՏԾ տարածումը և տեղեկացնի ազդեցության ենթարկված անձանց փոխհատուցման և վերաբնակեցման վճարման ընթացակարգերի մասին:

39. ՀՕՏԾ նախագծի նախապատրաստման ընթացքում 2022 թ. հոկտեմբերի 6-ին Ծրագրի տարածքում բնակվող պոտենցիալ ազդակիր անձանց համար անցկացվել է առաջին հանրային խորհրդատվությունը Երևանի Շենգավիթ վարչական շրջանի վարչական շենքում: Մեկ այլ հանրային խորհրդատվություն ազդեցության ենթարկված անձանց կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հետ անցկացվել է 2023 թ. հոկտեմբերի 13-ին: Հանրային խորհրդատվության ընթացքում ազդեցության ենթարկված անձինք կամ ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները տեղեկացվել են Ծրագրի կասեցման օրվա (2023 թվականի հոկտեմբերի 11) վերաբերյալ:

40. ՀՕՏ շրջանակը կտարածվի ազդակիր վարչական շրջանների գրասենյակներին և

կզետեղվի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ու Ասիական զարգացման բանկի կայքերում:

41. Ծրագրի տարբեր փուլերի ընթացքում (պլանավորում, իրականացում և մոնիթորինգ) ապահովվում են հանրային իրազեկման գրքույկների կամ բուկլետների տարածում, Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի օրինակների տեղադրում համայնքային գրասենյակներում, Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերի վերբեռնում Ասիական զարգացման բանկի կայքում և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կայքում:

42. Մինչ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնականացումը ազդեցության ենթարկված անձինք և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների կտեղեկացվեն մարդահամարի և Մանրամասն չափագրման հետազոտության արդյունքների մասին, և փոխհատուցման կամ այլ տարաբնակեցման աջակցության վերաբերյալ նրանց նախապատվությունները պատշաճ կերպով հաշվի կառնվեն: Ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների և այլ շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունն ապահովող գործընթացներն ու մեխանիզմները մանրամասն կներկայացվեն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրում՝ ներառյալ ամսաթիվը, մասնակիցների ցուցակը և խորհրդատվական հանդիպումների արձանագրությունները:

Գլուխ 8

Ինստիտուցիոնալ կառավարում

43. Ինստիտուցիոնալ կառավարումը սահմանված է Ծրագրի վարկային համաձայնագրով: Ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրագործումը կապահովեն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի հողերի օտարման և տարաբնակեցման մասնագետները խորհրդատուների աջակցությամբ՝ հիմնվելով սույն Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակում սահմանված քաղաքականության և ընթացակարգերի վրա: Մի շարք պետական և ոչ կառավարական գերատեսչություններ կարևոր դեր կխաղան հողի օտարման և տարաբնակեցման գործընթացներում: Գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեն տրամադրում է անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն և օրենքով սահմանված կարգով կատարում է իրավունքների պետական գրանցում: Ծրագրի կազմակերպչական կառուցվածքը ներառված է Պատկեր 2-ում:

44. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն իրականացնում է Ծրագրի ընդհանուր գործառույթները, ներառյալ միջգերատեսչական համակարգումը: Երևանի քաղաքապետարանը պատասխանատու է ամբողջ հողի օտարման և տարաբնակեցման նախապատրաստման, իրականացման և ֆինանսավորման համար: Այն կիրականացնի իր գործառույթները «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետի միջոցով, ով անմիջականորեն հաշվետու է Ծրագրի իրականացման խմբի ղեկավարին՝ հողի

օտարման և տարաբնակեցման բոլոր առաջադրանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարման մասով:

45. Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետը պատասխանատու է՝

- 1) Կադաստրի կոմիտեի հետ համագործակցության,
- 2) քարտեզագրման, հետազոտությունների և սեփականության նկատմամբ իրավունքների իրավական կարգավիճակների ստուգման աշխատանքներում խորհրդատուներին աջակցության,
- 3) Ասիական զարգացման բանկի վերանայմանը Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ներկայացման,
- 4) հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի տարածման,
- 5) հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման պլանավորման ու կառավարման, փոխհատուցման բաշխման,
- 6) բողոքների դեպքում աջակցության,
- 7) պատշաճ ներքին մոնիթորինգի ապահովման, և
- 8) ըստ Ասիական զարգացման բանկի առաջարկի՝ արտաքին մոնիթորինգի գործակալության ծառայությունների ձեռք բերման համար:

46. Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետը նաև կտրամադրի անհրաժեշտ փաստաթղթերը՝ ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին հողի օտարման և տարաբնակեցման բյուջեների արագ բաշխումն ապահովելու համար և կիրականացնի հողի օտարմանը և տարաբնակեցմանն առնչվող բոլոր գործողությունների համակարգումը:

47. Հողի օտարման և տարաբնակեցման առաջադրանքներում ներգրավվել են հեղինակային և տեխնիկական հսկողության խորհրդատուներ՝ ապահովելով Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստումը, և կներգրավի արտաքին մոնիթորինգային գործակալություն՝ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման արտաքին մոնիթորինգ և գնահատում իրականացնելու համար:

48. Տեղական իշխանություններն անմիջական իրավասություն ունեն հողի կառավարման և սեփականության իրավունքի ստուգման համար: Համայնքային իշխանությունները, ըստ անհրաժեշտության, կաջակցեն հետազոտությունների առաջադրանքներին, բողոքների լուծմանը, ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին խորհրդատվության և փոխհատուցման տրամադրմանը:

49. Հողի օտարման և տարաբնակեցման առաջադրանքների պատրաստման և իրականացման գործընթացի մասնակից այլ պետական հաստատություններն են՝

1) ՀՀ ֆինանսների նախարարությունը կապահովի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման բյուջեն վերջնական Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պաշտոնական հաստատումից հետո,

2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կապահովի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մասին

տեղեկատվության տրամադրումը,


3) ՀՀ պետական եկամուտների կոմիտեն կապահովի ազդակիր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված՝ նախորդ տարիների հաշվարկների և հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

4) ՀՀ կադաստրի կոմիտեն օրենքով սահմանված կարգով տրամադրում է անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն և օրենքով սահմանված կարգով կատարում է իրավունքների պետական գրանցում,

5) Հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման հետ կապված խնդրահարույց գործերը լուծելիս հիմք կընդունվի դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

6) ԱԶԲ-ն կիրականացնի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերանայում և թույլտվություն կտրամադրի պայմանագրերի շնորհման, շինարարական աշխատանքների ստորագրման/ մեկնարկի համար:

Պատկեր 2. ՀՕՏ ֆունկցիոնալ նկարագիրը



Գլուխ 9

Բողոքներ և դժգոհություններ

50. Բողոքարկման մեխանիզմը պետք է թույլ տա՝ ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների նբողոքարկել ցանկացած անընդունելի որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որը բխում է հողի կամ այլ

ակտիվների փոխհատուցումից: Խորհրդատվության, հետազոտության և փոխհատուցման ընթացքում ազդեցության ենթարկված անձինք և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները պետք է պատշաճ կերպով բանավոր կամ գրավոր տեղեկացվի իր իրավունքների և բողոքների ներկայացման կարգի վերաբերյալ: Բողոքները պետք է լուծվեն (ըստ Աղյուսակ 3-ում սահմանված քայլերի), այլ ոչ թե՛ վերացվեն հետևանքները: Դրան կարելի է հասնել հողի օտարմանը և տարաբնակեցմանը պատշաճ նախապատրաստմամբ՝ ապահովելով ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների լիարժեք մասնակցություն և խորհրդատվություն, ինչպես նաև ապահովելով կապ և համակարգում ազդակիր համայնքների և Իրականացման գրասենյակի միջև:

Աղյուսակ 3. Բողոքների լուծման գործընթաց

Բողոքների դիմաց փոխհատուցման հարցեր
<p>1. Նախևառաջ, բողոքների լուծումը պետք է իրականացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի մակարդակով: 30 օրվա ընթացքում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը կարող է մերժել գործը կամ ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին առաջարկել դրա լուծումը: Պատասխանը ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին կտրվի գրավոր:</p>
<p>2. Եթե պատասխանը ազդեցության ենթարկված անձանց չի բավարարում, կամ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի անձնակազմին անհրաժեշտ է լրացուցիչ ներուժ բողոքին պատասխանելու համար, ապա կարող է ձևավորվել Բողոքների վերանայման խումբ: Լուծումը կտրվի Բողոքների վերանայման խմբի կողմից բողոքը վերանայելու մեկնարկի օրվանից 30 օրվա ընթացքում: Պատասխանները ազդեցության ենթարկված անձանց կտրվեն գրավոր:</p>
<p>3. Եթե «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կամ Բողոքների վերանայման խմբի միջամտությունից և աջակցությունից հետո լուծում չի գտնվում, ապա ազդեցության ենթարկված անձինք և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունները կարող են իրենց բողոքը ներկայացնել Երևանի քաղաքապետարանին, ով պետք է գրավոր պատասխան տրամադրի 30 օրվա ընթացքում:</p>

51. Բողոքների լուծման նկարագրված մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու իրավունքը՝ գործը դատարան ներկայացնելու հենց բողոքարկման գործընթացի առաջին փուլում:

Գլուխ 10

Մոնիթորինգ և գնահատում

52. Ծրագրի շրջանակներում Հողի օտարումն ու տարաբնակեցումը կենթարկվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոնիթորինգի: Ներքին մոնիթորինգ կիրականացվի Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետի կողմից: Արտաքին մոնիթորինգը կիրականացվի հատվածական մոտեցմամբ և կհանձնարարվի արտաքին մոնիթորինգային գործակալությանը, որը կվարձվի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից և կհաստատվի Ասիական զարգացման բանկի կողմից: Արտաքին մոնիթորինգի գործակալությունը կընտրվի հասարակական կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների կամ խորհրդատվական ընկերությունների միջից: Ասիական զարգացման բանկն Արտաքին մոնիթորինգի գործակալության տեխնիկական առաջադրանքների վերաբերյալ առաջարկություններ կներկայացնի Ծրագրի իրականացման մեկնարկից հետո:

53. Ներքին մոնիթորինգը կիրականացվի կանոնավոր կերպով Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետի կողմից կա՛մ ուղղակիորեն, կա՛մ խորհրդատուի ծառայությունների միջոցով: Արդյունքները կտրամադրվեն Ասիական զարգացման բանկին ծրագրի իրականացման եռամսյակային հաշվետվությունների միջոցով: Ներքին մոնիթորինգի համար ցուցանիշներ կհանդիսանան գործընթացին և անմիջական ելքերին և արդյունքներին առնչվող ցուցանիշները, որոնք թույլ կտան գնահատել Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման առաջընթացն ու արդյունքները և անհրաժեշտության դեպքում ճշգրտել աշխատանքային ծրագիրը: Եռամսյակային հաշվետվությունները ընդգրկվելու են Ասիական զարգացման բանկին ներկայացվող ստանդարտ վերահսկողության հաշվետվություններում: Մոնիթորինգի հատուկ հենանիշները կլինեն՝

1) իրազեկման քարոզարշավ և խորհրդատվություն ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հետ,

2) հողի օտարման և հողի փոխհատուցման վճարումների կարգավիճակը,

3) ազդակիր կառույցների և այլ ակտիվների փոխհատուցումը,

4) ազդեցության ենթարկված անձանց վերաբնակեցումը,

5) եկամտի կորստի վճարումները,

6) եկամտի վերականգնման միջոցառումները,

7) կենսամիջոցների վերականգնումը:

54. Վերոնշյալ տեղեկատվությունը կհավաքագրվի Սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման մասնագետի կողմից, ով պատասխանատու է ծրագրի տարաբնակեցման գործողությունների ամենօրյա մոնիթորինգի համար հետևյալ գործիքների միջոցով՝

1) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների համար մարդահամարի տեղեկատվության վերանայում,

2) խորհրդատվություն և ոչ պաշտոնական հարցազրույցներ ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հետ,

3) դեպքերի խորը ուսումնասիրություններ,

4) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն,

5) հիմնական իրազեկողների հարցազրույցներ,

6) համայնքի հանրային հանդիպումներ:

55. Արտաքին մոնիթորինգը կիրականացվի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրագործմանը զուգահեռ, որի արդյունքում կկազմվի համապատասխանության հաշվետվություն, ինչը ցույց կտա փոխհատուցման ծրագրի իրականացումը սույն Հողի օտարման և տարաբնակեցման շրջականի և Ասիական զարգացման բանկի քաղաքականության հիման վրա և ազդեցության ենթակա անձանց և ազդեցության ենթակա տնային տնտեսությունների գոհունակությունը: Համապատասխանության հաշվետվությունը կներկայացվի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին ու Ասիական զարգացման բանկին և կլինի շինարարական աշխատանքները մեկնարկելու համար նախապայման:

56. Կարճաժամկետ մոնիթորինգի և գնահատման առաջադրանքը կիրականացվի յուրաքանչյուր Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի միջոցառման իրականացմանը զուգահեռ և կներառի լայնածավալ դաշտային այցելություններ և ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների ու «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի հետ շփում: Առաջադրանքի արդյունքում կկազմվի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման համապատասխանության հաշվետվություն, որը ցույց կտա, թե արդյո՞ք փոխհատուցման ծրագիրն իրականացվել է սույն Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի, Ասիական զարգացման բանկի ՔՀ 2009 թվականի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի դրույթների հիման վրա և ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների կենսապայմանների վերականգնմամբ: Հաշվետվությունը նաև կբացահայտի անհամապատասխանության դեպքերը, որոնք կլուծվեն Ուղղիչ գործողությունների պլանի միջոցով, և կներկայացվեն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին ու Ասիական զարգացման բանկին, ինչպես նաև՝ պայման կհանդիսանան շինարարական աշխատանքները մեկնարկելու համար: Համապատասխանության հաշվետվությունը կներառի հետևյալ գործողությունների արդյունքները՝

1) «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ներքին մոնիթորինգային հաշվետվությունների ստուգում,

2) ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների ու ազդեցության ենթարկված անձանց քանակների ստուգում,

3) ստուգում, որ արձանագրություններում առկա ազդեցությունների չափումները համապատասխանեն փաստացի ազդեցություններին,

4) ստուգում, որ արձանագրություններում կիրառված փոխհատուցման միավոր դրույքաչափերը համապատասխանեն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի դրույթներին,

5) ստուգում, որ փոխհատուցում տրամադրվել է բոլոր ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին և Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրով և Ուղղիչ գործողությունների պլաններով սահմանված չափով,

6) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի դրույթների և արդյունավետության պարամետրերի առնչությամբ փոխհատուցման գործընթացի անցկացման և ժամկետների գնահատում,

7) բողոքների դեպքերի վերանայում, ներառյալ գնահատում, թե արդյոք բողոքների լուծումն իրականացվել է համաձայն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի դրույթների և ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների գոհունակությամբ,

8) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին գոհունակության գնահատում՝ հիմնված ԱԵԱ/ԱԵՏՏ-ների 25% ընտրանքային հետազոտության վրա,

9) օտարման գործերի իրականացման և ավարտի գնահատում,

10) հանրային խորհրդատվության անցկացման, շահագրգիռ կողմերի ներգրավման և Իրականացման գրասենյակ- ազդեցության ենթարկված անձ և ազդեցության ենթարկված տնային տնտեսություն կապի գնահատում,

11) խիստ ազդակիր, խոցելի և վերաբնակեցված ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին օժանդակությունների տրամադրման գնահատում,

12) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման և Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության մեղմացման միջոցառումների համապատասխանության կամ անհամապատասխանության վերջնական գնահատում:

57. Եթե Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի կամ Սոցիալական համալիր ստուգման հաշվետվությունում մեղմման միջոցառումների իրականացումը բավարար կամ պատշաճ չեն կամ հայտնաբերվել են չնախատեսված ազդեցություններ, ապա վերջնական գնահատմամբ մանրամասն կներկայացվեն անհրաժեշտ ուղղիչ միջոցառումները, որ պետք է իրականացվեն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից՝ համաձայն մանրամասն Ուղղիչ գործողությունների պլանի:

58. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ավարտից 1 տարի անց կիրականացվի ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների կենսապայմանների վրա ազդեցությունների երկարաժամկետ գնահատում: Այն պետք է իրականացվի, որպեսզի պարզվի, թե արդյոք Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակները իրականացվել են: Գնահատումը կանդրադառնա հետևյալ հիմնական թեմաներին՝

1) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների վրա Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ազդեցության գնահատում,

2) ակտիվների և իրավունքների գնահատման, վճարումների ժամկետների, ֆինանսական միջոցների առկայության ու հատկացումների և այլ առումներով ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների գոհունակության գնահատում,

3) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման արդյունավետության գնահատում,

4) քաղաք դասեր և համապատասխան ուղղիչ գործողություններ, և

5) լրացուցիչ օգնություն ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին, որ պետք է ներառվի Ուղղիչ գործողությունների պլանում, եթե ուսումնասիրության արդյունքները ցույց տան, որ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակները ամբողջությամբ չեն իրականացվել:

59. Որպես վերջնական համապատասխանության հաշվետվության մաս՝ Արտաքին մոնիթորինգի գործակալությունը կգնահատի Ծրագրի ազդակիր խոցելի խմբերի՝ կնոջ կամ հաշմանդամություն ունեցող անձանց կամ տարեց անդամների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների և անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից ցածր եկամուտով ընտանիքների կարգավիճակը: Ծրագրի մոնիթորինգի և գնահատման համար որպես հիմք կդիտարկվեն հետևյալ ցուցիչները՝

1) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական պայմանները հետվերաբնակեցման ժամանակահատվածում,

2) ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հաղորդագրությունները և արձագանքները իրավունքների, փոխհատուցումների տարբերակների, զարգացման այլընտրանքների, վերաբնակեցման ժամանակացույցերի և այլնի վերաբերյալ,

3) բնակարանային և եկամտի մակարդակների փոփոխությունները,

4) ապօրինի բնակիչների վերաբնակեցումը,

5) գույքի գնահատումը,

6) բողոքների լուծման ընթացակարգը,

7) փոխհատուցման տրամադրումը և

8) ազդեցության ենթարկված անձանց գոհունակության մակարդակը հետվերաբնակեցման ժամանակահատվածում:

60. Արտաքին մոնիթորինգի գործակալությունը կիրականացնի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի հետիրագործման գնահատում ավարտից մոտ մեկ տարի անց: Ուսումնասիրության նպատակն է՝ պարզել՝ արդյոք Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակներն իրականացվել են, թե՛ ոչ: Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի և Աղքատության սոցիալական գնահատման մշակման ընթացքում իրականացված խիստ ազդակիր ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության

ենթարկված տնային տնտեսությունների Սոցիալ-տնտեսական հետազոտության հենանիշային տվյալները կօգտագործվեն ծրագրից առաջ և հետո պայմանները համեմատելու համար: Արտաքին մոնիթորինգի գործակալությունն ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին համապատասխան լրացուցիչ օգնություն կառաջարկի, եթե ուսումնասիրության արդյունքը ցույց տա, որ Հողի օտարման և տարաբնակեցման նպատակները չեն իրականացվել:

Գլուխ 11

Կարողությունների զարգացում և Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման վերաբերյալ վերապատրաստում

61. Հողի օտարման և տարաբնակեցման առաջադրանքներում ներգրավված բոլոր աշխատակիցները կանցնեն Ասիական զարգացման բանկի վերաբնակեցման քաղաքականության, կառավարման և Հողի օտարմանը և տարաբնակեցմանն առնչվող Հայաստանի Հանրապետությունում կիրառելի օրենսդրության վերաբերյալ կողմնորոշման և վերապատրաստման դասընթաց, որը կանցկացնեն միջազգային և տեղական վերաբնակեցման մասնագետները: Դասընթացն առնվազն կընդգրկի հետևյալը՝

- 1) հողերի օտարման սկզբունքներն ու ընթացակարգեր,
- 2) հանրային խորհրդատվություն և մասնակցություն,
- 3) իրավունքներ և փոխհատուցման ու աջակցության հատկացման մեխանիզմներ,
- 4) բողոքների լուծում և տարաբնակեցման գործողությունների մոնիթորինգ:

Գլուխ 12

Տարաբնակեցման բյուջե և ֆինանսավորում

62. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման և իրականացման բոլոր ծախսերը, ներառյալ՝ փոխհատուցման և Հողի օտարման և տարաբնակեցման վարչարարական ծախսերը, կհամարվեն Ծրագրի անբաժանելի մաս և կհատկացվեն ԱԶԲ կողմից և որպես համաֆինանսավորում ՀՀ կառավարության, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի կողմից: Հողերի փոխհատուցման և հողերի օտարումից առաջացած այլ ծախսերը (հարկեր, տուրքեր և գործարքային ծախսեր) կկատարվեն Երևանի համայնքային բյուջեի հաշվին: Մնացած ակտիվների փոխհատուցումը կկատարվի վարկի հաշվին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և գործարքային ծախսերի: Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը կներառի բյուջեի բաժին, որտեղ նշվում են փոխհատուցման միավոր դրույքաչափերը բոլոր ազդակիր հողվածների և օժանդակությունների համար, փոխհատուցման միավոր դրույքաչափերի հաշվարկման մեթոդաբանությունը, և բոլոր փոխհատուցման ծախսերի, ներառյալ վարչական և չնախատեսված ծախսերը, արժեքի աղյուսակը: Արտաքին մոնիթորինգի առաջադրանքների և ուսումնասիրությունների ու Հողի օտարման և տարաբնակեցման

ծրագրերի պատրաստման համար ծախսերը կարող են հատկացվել վարկային միջոցներից:

63. Որպես ծրագրի սեփականատեր՝ Երևանի քաղաքապետարանը պատասխանատու է ՀՕՏ ծրագրի իրականացման անհրաժեշտ միջոցների՝ ժամանակին հատկացման համար: Փոխհատուցման և վերականգնման բյուջեն Երևանի քաղաքապետարանի կողմից ուղղակիորեն կհատկացվի ազդեցության ենթարկված անձանց և ազդեցության ենթարկված տնային տնտեսություններին:

Գլուխ 13

ՀՕՏ-ի իրականացման գործընթաց

64. Հիմնվելով երկրի փորձի վրա՝ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստումը և իրականացումը կարող է տևել մինչև մի քանի ամիս: Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման և իրականացման համար ՀՕՏ-ին առնչվող հիմնական քայլերը տրվում են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Հողի օտարման և տարաբնակեցման առաջադրանքների գործընթաց

Քայլ	Գործողություն	Պատասխանատու
Ա)	ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	
1.	Ծրագրի Աղքատության և սոցիալական ազդեցությունների գնահատում	Ծրագրի պատրաստման տեխնիկական աջակցության խորհրդատու
2.	Նախնական նախագծի վերջնականացում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
3.	Մարդահամարի և Մանրամասն չափագրման հետազոտության համար հարցումների ձևանմուշների պատրաստում, Մարդահամարի և Մանրամասն չափագրման հետազոտության տեղական թիմերի վերապատրաստում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
4.	Ծրագրի տարածքի կադաստրային և հողամասերի քարտեզների հավաքագրում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու
5.	Ազդակիր տարածքների հողային գրառումների ստուգում, կադաստրային քարտեզների թարմացում և ազդեցությունների ու գնահատման ուսումնասիրությունների՝ Մանրամասն չափման ուսումնասիրություն, իրականացում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
6.	Հանրային խորհրդատվությունների անցկացում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
7.	Հողի օտարումից և տարաբնակեցումից ազատ տարածքների հայտնաբերում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի

Քայլ	Գործողություն	Պատասխանատու
		կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
8.	Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության պատրաստում և ներկայացում Ասիական զարգացման բանկ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
9.	Բանակցություններ ազդեցության ենթարկված անձանց հետ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
10.	Մարդահամարից տվյալների ինտեգրում Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու
11.	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և Ասիական զարգացման բանկի հաստատմանը	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան, ՀՀ կառավարություն, ԱԶԲ
12.	Տեղեկատվության տարածում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
Բ)	ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՈՒՄ	
1.	Մանրամասն նախագիծ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
2.	Ազդեցությունների ու ազդեցության ենթարկված անձանց ցուցակների վերանայում մանրամասն նախագծի հիման վրա	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
3.	Արժեքների վերանայում թարմացված դրույքաչափերի հիման վրա	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
4.	Օրինականացման իրավունք ունեցող ազդեցության ենթարկված անձանց օրինականացում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
5.	Վերջնական Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստում	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
6.	Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության ու Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի հաստատում Ասիական զարգացման բանկի կողմից	Ասիական զարգացման բանկ
7.	Վերջնական Հողի օտարման և տարաբնա-	Մանրամասն նախագծման և շինարարության

Քայլ	Գործողություն	Պատասխանատու
	կեցման ծրագրի տարածում. Հայերեն լեզվով Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի և տեղեկատվական բրոշյուրների տարածում ազդակիր համայնքներում, անգլերեն լեզվով ՀՕՏԾ տեղադրում ԱԶԲ կայքում	վերահսկման խորհրդատու, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Ասիական զարգացման բանկ
8.	Շնորհված շինարարական աշխատանքների պայմանագրի կնքում	Ասիական զարգացման բանկ, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
9.	Սոցիալական համալիր ստուգման հաշվետվությունում ներառված Հողի օտարումից և տարաբնակեցումից ազատ հատվածի հանձնում Կապալառուին	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
Գ)	ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	
1.	Շնորհված պայմանագրերի ստորագրման հաստատում	Ասիական զարգացման բանկ
2.	Փոխհատուցման գործողությունների պլանի մանրամասն ժամանակացույց	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
3.	Վերաբնակեցման ծանուցումների տրամադրում ազդեցության ենթարկված անձանց	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
4.	Հողերի փոխհատուցումների ստուգման շնորհում	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
5.	Այլ փոխհատուցումների և աջակցությունների/վերականգնման ստուգման շնորհում	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան
6.	Ազդակիր կառույցների/ակտիվների ապամոնտաժում/տեղափոխում	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան, Կապալառու
7.	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման վերանայում համապատասխանության հաշվետվության միջոցով	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան, Արտաքին մոնիթորինգի գործակալություն, Ասիական զարգացման բանկ
8.	Եթե ՀՕՏԾ իրականացումը գոհացնող է, թողարկվում է շինարարական աշխատանքների մեկնակի վերաբերյալ ծանուցում	Ասիական զարգացման բանկ, Երևանի քաղաքապետարան
Դ)	ՀԵՏԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	
1.	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ու Սոցիալական համալիր ստուգման հաշվետվության անկախ գնահատում	Արտաքին մոնիթորինգի գործակալություն
Ե)	ՑԻԿԼԱՅԻՆ/ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	
1.	Ներքին մոնիթորինգ. կիսամյակային հաշվետվությունների ներկայացում Ասիական զարգացման բանկ	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ
2.	Արտաքին մոնիթորինգ	Արտաքին մոնիթորինգի գործակալություն

Քայլ	Գործողություն	Պատասխանատու
3.	Բողոքների լուծում/դատական հայցեր	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան, դատարան
4.	Միջգերատեսչային համակարգում և կապ ազդեցության ենթարկված անձանց հետ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարան, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ

Գլուխ 14

Ստանդարտ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նկարագիր

1) Հողի օտարման և տարաբնակեցման հարցեր ծրագրի համար

Այս գլուխը նկարագրում է ծրագրի գործողությունները և ՀՕՏ պահանջող տարրերը, հողի օտարումը և դրա ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար դիտարկվող այլընտրանքային տարբերակները, եթե կան այդպիսիք, և ինչու են մնացած ազդեցություններն անխուսափելի:

2) Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ

Այս գլուխը նկարագրում է ազդեցությունների նախապատրաստումը (ով է այն կատարել և երբ է այն նախաձեռնվել) և տրամադրում է յուրաքանչյուր ազդեցության ամբողջական գնահատում և ազդակիր անձանց մարդահամարը, ինչպես նկարագրված է ՀՕՏ-ում: Գլուխը նաև ներառում է յուրաքանչյուր ազդակիր տարրի և սուբսիդիայի կամ օժանդակության համար միավոր-փոխհատուցման դրույքաչափերի որոշման մեթոդաբանության նկարագրությունը:

3) Նպատակներ, քաղաքականության շրջանակ և իրավունքներ

Հիմնվելով ՀՕՏ-ի վրա՝ այս գլուխը ընդհանուր նկարագրում է ծրագրի համար նախատեսված իրավասության և փոխհատուցման շրջանակը:

4) Խորհրդատվություն և բողոքների լուծման մասնակցություն

Այս գլուխն ամփոփում է ՀՕՏ նկարագրված ազդակիր անձանց բողոքների լուծման ընթացակարգերը և նկարագրում է խորհրդատվության/մասնակցության գործընթացը, ինչպես նաև տվյալ ենթածրագրում ծագած բողոքների լուծումը:

5) Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում

Այս գլուխը նկարագրում է եկամտների վերականգնման իրականացվելիք միջոցառումները:

6) Ինստիտուցիոնալ շրջանակ

Այս գլուխը նկարագրում է ինստիտուցիոնալ կազմակերպումը ծրագրի համար ՀՕՏ-ի հիման վրա: Այն ներառում է հետևյալ հարցերը՝ պատասխանատվությունը հիմնական առաջադրանքների համար, ինչպես նաև՝ ՀՕՏ պլանավորման, բանակցման, խորհրդատվության, հաստատման, համակարգման, իրականացման, ֆինանսավորման, մոնիթորինգի և գնահատման համար:

7) Տարաբնակեցման բյուջե և ֆինանսավորում

Այս գլուխը տրամադրում է յուրաքանչյուր ազդակիր տարրի համար միավոր փոխհատուցման դրույքաչափը և գնահատում է ՀՕՏ բյուջեն ծրագրի համար: ՀՕՏ բյուջեն կներառի հողի օտարման և վերջնական հողի օտարման ծախսերը, բերքի փոխհատուցման, ինչպես նաև սուբսիդիաների ու օժանդակությունների համար վճարման ենթակա գումարները, մոնիթորինգի ու գնահատման ծախսերն ու վարչարարական ծախսերը, և այն կճշգրտվի գնաճի ու կիրառելի հարկերին համապատասխան:

8) Իրականացման ժամանակացույց

Այս գլուխը տրամադրում է ժամանակացույց, որ ներկայացնում է ՀՕՏ գործընթացը և ՀՕՏ առաջադրանքների կապը շինարարական աշխատանքների իրականացման հետ:

9) Մոնիթորինգ և գնահատում

Այս գլուխը սահմանում է կանոնավոր և անկախ մոնիթորինգի ու գնահատման կազմակերպման միջոցառումները:

Գլուխ 15

Ձեռնարկատիրական գործունեության և աշխատանքի կորստի փոխհատուցման մեթոդաբանություն

65. Ձեռնարկատիրական գործունեության և աշխատանքի կորուստների համար փոխհատուցման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանված են ՀՕՏՀ Իրավունքների մատրիցայի Կետ 8-ում: Դրանց մասով հիմնական սահմանումներն ու հասկացություններն են՝

1) ազդակիր կողմերն են ազդակիր ձեռնարկատիրական գործունեության սեփականատեր իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը,

2) մշտական ազդեցության ենթարկվող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն ազդակիր կողմերն են, որոնց ձեռնարկատիրական գործունեությունները մշտապես դադարեցվում են Ծրագրի գործողություններով,

3) ժամանակավորապես ազդեցության ենթարկվող իրավաբանական կողմերը և անհատ ձեռնարկատերերը ազդակիր կողմերն են, որոնց ձեռնարկատիրական գործունեությունը ընդհատվում է ժամանակավորապես,

4) մշտական դադարեցված են համարվում առնվազն 12 ամսով դադարեցված ձեռնարկատիրական գործունեությունները,

5) ժամանակավորապես դադարեցված են համարվում մինչև 12 ամսով դադարեցված ձեռնարկատիրական գործունեությունները:

66. Ըստ ՀՕՏՀ սկզբունքների՝ փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման օրով, որ սահմանվում է ազդակիր ակտիվների նկարագրության արձանագրությունների պատրաստման (ստորագրման) օրը: Կասեցման օրվանից հետո ազդակիր տարրերի վրա կատարված բարելավումներն իրավասու չեն փոխհատուցման:

67. Սույն փաստաթղթում նշված ամսական փոխհատուցման գումարները չպետք է պակաս լինեն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձից:

68. Դրույթներ հարկային հաշվետվություններ կամ հաշվարկներ ներկայացնող ազդակիր անձանց համար՝

1) հարկման ընդհանուր համակարգում գործող մշտապես ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կստանան 1 տարվա զուտ շահույթին համարժեք դրամական փոխհատուցում, որ հաշվարկվում է որպես նախորդ տարվա շահութահարկի հաշվարկում նշված հարկվող շահույթի և համապատասխան վճարման ենթակա հարկի գումարի տարբերություն: Հարկման ընդհանուր համակարգում գործող ժամանակավորապես ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն վերը նշված կարգով, սակայն միայն մինչև 1 տարի ձեռնարկատիրության դադարեցման ամիսների համար,

2) շրջանառության հարկի համակարգում գործող մշտապես ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կստանան 1 տարվա զուտ եկամտին համարժեք դրամական փոխհատուցում, որ հաշվարկվում է որպես նախորդ չորս եռամսյակների համար շրջանառության հարկի հաշվարկներում նշված իրացման շրջանառության գումարի և հաշվարկված շրջանառության հարկի համապատասխան գումարի ու աշխատողների աշխատավարձերի հանրագումարի տարբերություն: Շրջանառության հարկի հարկման համակարգում գործող ժամանակավոր ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն վերը նշված կարգով, սակայն միայն մինչև 1 տարի ձեռնարկատիրության դադարեցման ամիսների համար,

3) մշտապես ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք գործում են միկրոձեռնարկությունների հարկման համակարգում, կստանան 1 տարվա զուտ եկամտին համարժեք դրամական փոխհատուցում, որ հաշվարկվում է որպես գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միկրոձեռնարկությունում ներգրավված աշխատակիցների աշխատավարձերի գումարի տարբերություն: Ժամանակավոր ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք, որոնք գործում են միկրոձեռնարկությունների հարկման համակարգում, կփոխհատուցվեն վերը նշված կարգով, սակայն միայն մինչև 1 տարի ձեռնարկատիրության դադարեցման ամիսների համար:

69. Մշտական ազդեցության ենթարկվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք նույն տարվա ընթացքում գործել են հարկման մեկից ավելի համակարգերում, կստանան փոխհատուցում 68-րդ կետում նկարագրված կարգով՝ տարվա ընթացքում յուրաքանչյուր ժամանակահատվածում գործած հարկման համակարգին համապատասխան:

70. Դրույթներ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողն ազդակիր անձանց համար՝ անկախ վերջիններիս կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններում հաշվառում ունենալու և հաշվարկներ ներկայացրած լինելու հանգամանքից.

1) Մշտական ազդեցության ենթարկված իրավաբանական անձինք, անհատ

ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք կստանան Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա (կասեցման օրվա դրությամբ) հաշվարկված դրամական փոխհատուցում, և այն կտրամադրվի միանվագ 12 ամսվա համար,

2) ժամանակավոր ազդեցության ենթարկվող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձիք կստանան Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա (կասեցման օրվա դրությամբ) հաշվարկված դրամական փոխհատուցում, և այն կտրամադրվի միանվագ ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների համար:

71. Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը կհաշվարկվի՝ ելնելով ձեռնարկատիրության վրա ազդեցություն թողնող ճանապարհահատվածի շրջանակներում նախատեսված ծրագրային գործողությունների տևողությունից: Ձեռնարկատիրական գործունեությունը կանգնեցնող ծրագրային գործողությունների ժամանակացույցը երկարացնելու դեպքում փոխհատուցումը կավելացվի շինարարական աշխատանքների լրացուցիչ ամիսների համար, բայց ոչ ավել, քան 12 ամսով (եթե 12 ամսից ավել է, ապա մշտական ազդեցություն է):

72. Պետական գրանցման ծախսերի և ձեռնարկատիրական գործունեության լիցենզիայի վճարների փոխհատուցում՝

1) մշտական ազդեցության ենթարկվող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն հարկային հաշվետվություն կամ հաշվարկ կամ այլ պաշտոնական հարկային հաշվետվություններ, կփոխհատուցվեն նաև պետական գրանցման և լիցենզավորման վճարների ծախսերի համար: Հատուկ վայրում գործունեություն իրականացնելու նպատակով («Վ» տառով նշվում է գործունեության տեսակը) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն թողարկված լիցենզիաների դեպքում լիցենզիաները չեն կասեցվի և, հետևաբար, չեն փոխհատուցվի, այլ կփոփոխվեն՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը հնարավորություն ընձեռելով նույն ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնել այլ հասցեում: Նման դեպքերում փոխհատուցում տրամադրվում է լիցենզիայի վերաթողարկման համար սահմանված վճարի համար,

2) ժամանակավոր ազդեցության ենթարկվող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն հարկային հաշվետվություն/հաշվարկ կամ այլ պաշտոնական հարկային հաշվետվություններ, կփոխհատուցվեն լիցենզավորման վճարների ծախսերի համար՝ տարեկան պետական տուրքի 1/12-ի չափով՝ բազմապատկած ձեռնարկատիրության դադարեցման ամիսների քանակով:

73. Աշխատանքի կորստի համար փոխհատուցման իրավունք ունեցող աշխատողներն այն գրանցված աշխատողներն են, ովքեր աշխատել են ազդակիր ձեռնարկությունում առնվազն 2 ամիս մինչև կասեցման օրը և դադարեցման պահին դեռևս աշխատում են ազդակիր ձեռնարկությունում (ընկերություն կամ անհատ ձեռներեց) և որոնց համար սոցիալական ապահովության վճարները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Փոխհատուցումը հաշվարկվելու է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) ազդեցության ենթարկված ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման (մշտական ազդեցության) դեպքում աշխատողները կստանան դրամական փոխհատուցում 6 ամսվա համար՝ յուրաքանչյուր ամսվա համար իրենց միջին ամսական աշխատավարձի (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի սահմանված կարգով հաշվարկված) չափով,

2) ազդեցության ենթարկված ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր ընդհատման (ժամանակավոր ազդեցության) դեպքում աշխատողները կստանան դրամական փոխհատուցում՝ ձեռնարկատիրական գործունեության դադարեցման յուրաքանչյուր ամսվա համար իրենց միջին ամսական աշխատավարձի (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի սահմանված կարգով հաշվարկված) չափով, սակայն գումարային՝ վեց ամսից ոչ ավելի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ